



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ» ԴՈԱԿ



ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՔՐԵԱԳԻՏՈՒԹՅԱՆ


ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ



№6

ISSN 2579-2865

ԵՐԵՎԱՆ 2021



**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ
ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ Է ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐԻ
ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**



**ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՐԵԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ**

Հիմնադրված է 2019 թվականին

2021թ-ից պարբերականն ընդգրկված է ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր
Ա.Ն. Հովսեփյան

Պատասխանատու քարտուղար
Ա.Թ. Մոսիկյան

Խմբագրական խորհրդի անդամներ

- | | |
|------------------------|--------------------------|
| Ա.Վ. Աղասյան | Ռ.Վ. Աղուզումցյան |
| Ս.Վ. Առաքելյան | Ա.Պ. Գահնապետյան |
| Վ.Գ. Ենգիբարյան | Ա.Ի. Ուսով (Ռուսաստան) |
| Ա.Ն. Կլյուն (Ուկրաինա) | Ռ.Ա. Հովհաննեսյան |
| Ա.Պ. Ղուկասյան | Ս.Ա. Մինասյան |
| Պ.Ս. Ոսկանյան | Ա.Ս. Չախոյան |
| Ա.Վ. Պապոյան | Ա.Գ. Ռուվին (Ուկրաինա) |
| Վ.Գ. Սահակյան | Դ.Ն. Վիեռա (Պորտուգալիա) |

Խմբագրական կոլեգիա

- | | |
|-------------------|----------------|
| Պ.Ս. Ոսկանյան | Ա.Թ. Մոսիկյան |
| Ռ.Ա. Հովհաննեսյան | Ա.Ա. Պետրոսյան |
| Կ.Հ. Մամիկոնյան | Լ.Ա. Ավոյան |
| | Ս.Ա. Բադալյան |



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

НАЦИОНАЛЬНОЕ БЮРО ЭКСПЕРТИЗ

НОМЕР 6
2021

**АРМЯНСКИЙ ЖУРНАЛ
СУДЕБНОЙ ЭКСПЕРТИЗЫ И КРИМИНАЛИСТИКИ**

Основан в 2019 году

С 2021 года журнал включён в перечень научных изданий, допущенных Высшей аттестационной комиссией Республики Армения, для опубликования основных научных результатов и положений диссертаций

Редакционный совет

Главный редактор

Овсепян А.Н.

Ответственный секретарь

Мосикян А.Т.

Члены редакционного совета

Агасян А.В.	Агузумцян Р.В.
Аракелян С.В.	Гахнапетян А.П.
Енгибарян В.Г.	Усов А.И. (Россия)
Гукасян А.П.	Ованесян Р.А.
Клюев А.Н. (Украина)	Минасян С.А.
Папоян А.В.	Чахоян А.С.
Воскянян П.С.	Рувин А.Г. (Украина)
Саакян В.Г.	Виейра Д.Н. (Португалия)

Редакционная коллегия

Воскянян П.С.	Мосикян А.Т.
Ованесян Р.А.	Петросян А.А.
Мамиконян К.О.	Авоян Л.А.
Бадалян С.А.	

ЕРЕВАН · 2021 · 6

© Национальное бюро экспертиз



NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

NATIONAL BUREAU OF EXPERTISES

NUMBER 6

2021

**ARMENIAN JOURNAL
OF FORENSIC EXPERTISE AND CRIMINALISTICS**

Founded in 2019

Since 2021 the journal has been included in the list of periodical publications acceptable for publication of dissertation results and provisions approved by the Supreme Certifying Commission of the Republic of Armenia

Editorial Board

Editor-in-Chief

A.N. Hovsepyan, Ph.D

Assistant editor

A.T. Mosikyan

Members of Editorial Board

A.V. Aghasyan	R.V. Aghuzumtsyan
S.V. Arakelyan	A.P. Gahnapetyan
V.G. Yengibaryan	A.I. Usov (Russian)
O.N. Kliuiev (Ukraine)	R.A. Hovhannesyanyan
A.P. Ghukasyan	S.A. Minasyan
P.S. Voskanyan	A.S. Chakhoyan
A.V. Papoyan	A.G. Ruvyn (Ukraine)
V.G. Sahakyan	D.N. Viera (Portugal)

Editorial team

P.S. Voskanyan	A.T. Mosikyan
R.A. Hovhannisyanyan	A.A. Petrosyan
K.H. Mamikonyan	L.A. Avoyan
S.A. Badalyan	

YEREVAN · 2021 · 6



Հարգելի Ընթերցող,

Ձեզ եմ ներկայացնում «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես» գիտական պարբերականի հերթական՝ վեցերորդ համարը:

Կարևոր եմ համարում նշել, որ պարբերականում ներառվող գիտական հոդվածներն ընդգրկված են DOI (թվային օբյեկտի նույնականացուցիչ) համակարգում, որն ապահովում է նյութերի նույնականացման, բովանդակության և մետատվյալների կառավարման գործընթացը և մեծապես հեշտացնում գիտական նյութերի որոնման և մեջբերման աշխատանքների իրականացումը: DOI համարանիշի տրամադրումն ապահովում է նաև մտավոր սեփականության իրավունքի պաշտպանությունը, աշխարհի առաջատար գիտական մատենագիտական շտեմարաններում ընդգրկման գործընթացի դյուրին իրականացումը, բոլոր առաջատար հրատարակչությունների կողմից ընդունված չափանիշներին համապատասխանեցումը, ինչպես նաև գիտական հոդվածների առավել բարձր ցիտման գործակից ունենալու հնարավորությունը:

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից նման հետևողական քայլերի ձեռնարկումով պարբերականի թողարկումը հնարավորություն է ընձեռում ոչ միայն փոխանակվել իրականացված գիտագործնական աշխատանքների արդյունքներով, դատափորձագիտական ոլորտի ժամանակակից ձեռքբերումներով, այլ նաև նպաստում է գիտական արդյունքի ներկայացման պատշաճ ապահովմանը, ինչպես նաև պարբերականում դատափորձագիտական և հարակից բնագավառների մասնագիտական ուղղությունների հնարավորությունների զարգացմանն ու գիտականահեն տեղեկատվության ապահովմանը:

Պարբերականի 6-րդ համարը նվիրվում է պարբերականի ստեղծման ակունքներում կանգնած ականավոր գիտնական, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի տնօրենի խորհրդական, պարբերականի խմբագրական կոլեգիայի անդամ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Անդրանիկի Հովհաննեսյանին:

Պրոֆեսոր Ռուբեն Հովհաննեսյանը 2019թ-ին պարբերականի հիմնադրման օրվանից մինչև իր կյանքի վերջին օրերը գիտահրատարակչական պատշաճ արդյունքի ապահովման գործում ցուցաբերած ջանասիրության, բարձր պրոֆեսիոնալիզմի և աննախադեպ նվիրումով աշխատանքի շնորհիվ նշանակալի ներդրում է ունեցել ԴՓՔՀՀ-ի կազմավորման և ճանաչելիության ապահովման գործընթացում:

Պարբերականի խմբագրական խորհուրդը հավատարիմ մնալով երջանակահիշատակ Ռուբեն Հովհաննեսյանի սկզբունքներին, բժախնդրորեն շարունակելու է համատեղ սկսված գործը՝ դատափորձագիտական ոլորտի գիտական ապահովման կարևոր գործընթացների շարունակական զարգացման համար՝ նպատակ ունենալով նաև հնարավորություն ընձեռել ընթերցողին նորովի ընկալել դատական փորձաքննության և քրեագիտության ոլորտի համաշխարհային միտումներն ու զարգացման հեռանկարները:

Վերոգրյալի համատեքստում կարևոր ենք համարում տեսնել Ձեր գիտական աշխատանքների լավագույն արդյունքները ԴՓՔՀՀ պարբերականի հաջորդ համարներում:

*Հարգանքով՝
բժշկական գիտությունների թեկնածու Ա.Ն.Հովսեփյան*

Уважаемый Читатель,

Представляю Вашему вниманию очередной шестой номер научного издания «Армянский журнал судебной экспертизы и криминалистики».

Считаю важным отметить, что научные статьи, публикуемые в журнале, включены в систему DOI (цифровой идентификатор объекта), которая обеспечивает процесс идентификации материала, управление содержанием и метаданными, что значительно облегчает поиск и цитирование научных материалов. Предоставление цифрового идентификатора объекта также обеспечивает защиту прав интеллектуальной собственности, облегченную реализацию процесса включения в ведущие мировые библиографические базы данных, соответствие со стандартами, принятыми ведущими издательствами, а также возможность иметь более высокий уровень цитирования научных статей.

Предпринимаемые ГНКО «Национальное бюро экспертиз» Национальной академии наук РА последовательные шаги по выпуску периодического научного издания предоставляют возможность не только обмениваться результатами научной и практической деятельности, современными достижениями в области судебной экспертизы, но и способствуют надлежащему представлению научных результатов, в том числе обеспечивая в периодическом научном издании возможность развития и предоставления научно обоснованной информации по профессиональным направлениям судебной экспертизы и смежных с ней областей.

Шестой номер журнала посвящен памяти Ованесяна Рубена Андреевича - видного ученого, стоявшего у истоков создания издания, советника директора ГНКО «Национальное бюро экспертиз» Национальной академии наук Республики Армения, члена редакционного совета журнала, доктора медицинских наук.

Следует отметить, что со дня основания журнала в 2019 году и до последних дней своей жизни, благодаря трудолюбию, высокому профессионализму и беспрецедентной самоотдаче в деле обеспечения надлежащего уровня научного издания, Ованесян Рубен Андреевич, внес значительный вклад в процесс формирования и признания «Армянского журнала судебной экспертизы и криминалистики».

Воздавая должное светлой памяти и соблюдая неуклонно принципы Рубена Андреевича Ованесяна, редакция журнала скрупулёзно продолжит начатую совместную работу по непрерывному развитию важных процессов научного обеспечения сферы судебной экспертизы, имея цель предоставить читателю возможность по-новому взглянуть на мировые тенденции и перспективы развития судебной экспертизы и криминалистики.

Исходя из вышеизложенного, будем рады ознакомиться с лучшими результатами Ваших научных работ в последующих номерах АЖСЭК.

*С уважением,
кандидат медицинских наук Овсепян А.Н.*

Dear Reader,

I would like to introduce you to the next sixth edition of the scientific journal “Armenian Journal of Forensic Expertise and Criminalistics”.

I consider it important to mention that the scientific articles published in the journal are included in the DOI (Digital Object Identifier) system, which ensures the process of material identification, content and metadata management, greatly facilitates the search and citation of scientific materials. The provision of a DOI number ensures the protection of intellectual property rights, simplified implementation of the process of inclusion in the world’s leading scientific bibliographic databases, compliance with the standards adopted by all leading publishers, as well as the possibility of having a higher citation rate.

The successive steps taken by «National Bureau of Expertise» of SNPO of the National Academy of Sciences of the Republic of Armenia to publish a scientific periodical provide an opportunity not only to exchange the results of scientific and practical activities, modern achievements in the field of forensic expertise, but also contribute to the proper presentation of scientific results, as well as the development of opportunities and provision of evidence-based information in the professional areas of forensic science and related fields.

The sixth edition of the scientific journal is dedicated to the memory of Professor Ruben Hovhannesian - a prominent scientist who stood at the origins of the publication, adviser to the Director of NAS RA «National Bureau of Expertise» SNPO, a member of the Editorial Board of the journal, Doctor of Medical Sciences.

Since the day of the foundation of the journal in 2019 to the last days of his life., Professor Rouben Hovhannesian has made a significant contribution to the formation and recognition of the journal due to his diligence, high professionalism and unprecedented dedication to his work in ensuring the proper level of scientific publication.

Paying tribute to the blessed memory and unswervingly adhering to the principles of Rouben A. Hovhannesian, the Editorial Board of the periodical will diligently continue the joint work for the continuous development of important processes of scientific support in the field of forensic expertise, aiming to enable the reader to re-understand the world trends in forensics and forensics.

In view of the foregoing, we will be glad to get acquainted with the best results of your scientific works in subsequent editions of the scientific journal “Armenian Journal of Forensic Expertise and Criminalistics”.

Sincerely,

Argam Hovsepyan, PhD



**«SERATEC PMB» ԹԵՍԻ ՄԻՋՈՑՈՎ ԴԱՇՏԱՆԱՅԻՆ ԵՎ
ԴԻԱԿԱՅԻՆ ԱՐՅԱՆ ՄԵՋ D-ԴԻՄԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ՄԵԹՈԴԻ
ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ, ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՏԱԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ
ՀԵՏԱՋՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Ավագյան Լ.Ա., Տեր-Գևորգյան Ա.Գ.

*Փորձաքննությունների ազգային բյուրո,
Երևան, Հայաստան*

Սեռական բնույթի հանցագործությունների փորձաքննությունների ժամանակ հաճախ անհրաժեշտ է լինում պատասխանել նախաձեռնողի կողմից առաջադրված այն հարցադրմանը, թե արդյոք առկա արյան հետքերն ինչ ծագում ունեն՝ դաշտանային, թե՛ ծայրամասային արյուն է: Այս առումով ծայրամասային արյան և դաշտանային հեղուկի տարբերակումը կարող է կարևոր ապացույցներ հանդիսանալ սեռական ուղեղային ֆունկցիաների բացահայտման դեպքերում:

Հոդվածում ներկայացվել է SERATEC PMB ժամանակակից ախտորոշիչ թեստի կիրառմամբ դատակենսաբանական փորձագիտական հետազոտություններում նոր մեթոդական մոտեցում՝ մարդու դաշտանային, դիակային և/կամ ծայրամասային արյան նմուշների տարբերակման համար: Աշխատանքի նպատակը կայանում է միջազգային արդյունավետ փորձի վրա հիմնված մոտեցումների մշակման, արդյունքների արժանահավաստության գնահատման, ինչպես նաև հետազոտում դատակենսաբանական հետքերի փորձագիտական աշխատանքներում ներդրման մեջ: Հոդվածում վերլուծվել են նաև SERATEC PMB իմունաքրոմատոգրաֆիկ թեստի կիրառելիության դրական և բացասական կողմերը:

Բանալի բառեր. D-դիմեր, հոմոգլոբին, SERATEC PMB իմունաքրոմատոգրաֆիկ թեստ, դիակային և/կամ ծայրամասային արյուն, դաշտանային արյուն:

Ներածություն

Կենսաբանական ծագման հետքերը, որոնք հայտնաբերվել են դեպքի վայրում, համարվում են կարևորագույն իրեղեն ապացույցներ հանցագործությունների հետագա բացահայտման համար: Իրեղեն ապացույցների վրա առկա կենսաբանական ծագման հետքերից առավել հաճախ, որպես հետազոտման օբյեկտ համարվում է արյունը:

Դատակենսաբանական լաբորատորիաներում հաջողությամբ իրականացվում են սերմնահեղուկի և թքի հայտնաբերման արագ թեստեր, իսկ մարմնի այլ հեղուկներից, մասնավորապես՝ հեշտոցային կամ դաշտանային հեղուկներն ավելի դժվար են հայտնաբերվում: Ծայրամասային և դաշտանային արյան միջև եղած տարբերությունները կարող են էական դեր ունենալ նախաձեռնող մարմնի կողմից հետաքննությունների համար:

Աշխատանքի նպատակն է նոր մեթոդի ներդրմամբ իրականացնել կենսաբանական ծագման հետքերի տարբերակում և նախաձեռնողի կողմից առաջադրված համապատասխան հարցերին տալ սպառիչ պատասխաններ: Արդյունքները ցույց են տալիս, որ նոր իմունոքրոմատոգրա-

Թղթակցական հասցեն՝ Լիլիթ Աղասու Ավագյան, դատաբժշկական փորձաքննությունների բաժնի կենսաբանական հետքերի փորձաքննությունների բաժանմունքի պետ, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ, ք. Երևան, Իսակովի 24, e-mail: lilitsuro@mail.ru

Ֆիկ թեստի մշակումն էական առաջընթաց է սեռական ուսնձգության դեպքերի ապացույցների վերլուծության և մեկնաբանման մեջ: Արյունը հանցագործության վայրերում ամենից հաճախ հայտնաբերվող հեղուկներից է: Ծայրամասային արյան և դաշտանային հեղուկի տարբերակումը կարող է կարևոր ապացույցներ հանդիսանալ սեռական ուսնձգությունների դեպքերում: Ծայրամասային արյան առկայությունը ցույց է տալիս տրավմատիկ պատճառը, դաշտանային հեղուկը ցույց է տալիս արյունահոսության բնական պատճառը [1]:

Հաշվի առնելով կենսաբանական ծագման հեղուկների տարբերակման և նույնականացման կարևորությունը՝ երկար տարիներ ինտենսիվորեն ուսումնասիրվել են նոր մեթոդներ, այդ թվում՝ մանրադիտակային հետազոտություն և միկրո-ՌՆԹ [2,3]: Միկրո-ՌՆԹ և ԴՆԹ մեթիլացման պրոֆիլավորումներ են, որոնք հաջողությամբ օգտագործվել են արյան նույնականացման համար: Հարկ է նշել, որ այս մեթոդները ժամանակատար և ծախսատար են, բացի այդ, այս մեթոդներով ծայրամասային արյունը դաշտանային հեղուկից տարբերակելը շատ դժվար է [4]:

Կենսաբանական ծագման հեղուկների հայտնաբերման իմունոքրոմատոգրաֆիկ հետազոտությունները շատ հստակ և հեշտ են կրառման տեսանկյունից: Ի դեպ, առաջին անգամ 1996 թվականին հաստատվել է, որ դաշտանային արյան մեջ D-դիմերի միջին կոնցենտրացիան 200 անգամ ավելի բարձր է, քան ծայրամասային արյան մեջ [5]:

Հանցագործության վայրում կենսաբանական ծագման հետքերի բացահայտումը դատական գործընթացի շրջանականերում ամենակարևոր բաղադրիչներից մեկն է: Այն օգնում է նախաձեռնող մարմնին տեղեկատվություն տրամադրել հանցագործության ընթացքի մասին: Սեռական բնույթի հանցագործությունների ժամանակ հաճախ անհրաժեշտ է լինում պատասխանել այն հարցադրմանը, թե արդյոք առկա արյան հետքերն ինչ ծագում ունեն՝ դաշտանային, թե՞ ծայրամասային արյուն է: Նմանատիպ հարցերի պարզման նպատակով մեր կողմից կիրառվել է SERATEC PMB իմունաքրոմատոգրաֆիկ թեստը, որը կազմված է թեստ սկավառակից, մեկ անգամյա օգտագործման պիպետից և բուֆերից (նկար 1) [6]:



Նկար 1. SERATEC PMB իմունաքրոմատոգրաֆիկ թեստ:

Թեստ սկավառակը կազմված է շրջանաձև բացվածք ունեցող փոսիկից, սպրոզիչ /C/ երիզից, մարդու հեմոգլոբինի առկայություն հաստատող /P/ երիզից, արյան մեջ առկա D-դիմերի առկայություն հաստատող /M/ երիզից:

SERATEC PMB – Նա հարաբերականորեն նոր իմունաքրոմատոգրաֆիկ թեստ է, այն ուղղված է հայտնաբերելու մարդկային ծագման հեմոգլոբինը և D-դիմերը: Վերջինս թույլ է տալիս տարբերակել դաշտանային, ծայրամասային և դիակային արյունների առկայությունը [6]:

Հեմոգլոբինը (Hb) մարդու և տարբեր կենդանիների օրգանիզմներում հանդիպող, երկաթ պարունակող բարդ փոխադրիչ սպիտակուց է: Հեմոգլոբինը արյան շնչառական պիզմենտ է, որը պարունակվում է էրիթրոցիտներում և մասնակցում թթվածնի և ածխաթթու գազի տեղափոխմանը [7]:

D-դիմերը հանդիսանում է թրոմբառաջացման և ֆիբրինոլիզի մարկեր, որը ֆիբրինոլիզի պրոցեսի ընթացքում թրոմբի քայքայվելուց հետո արյան մեջ մնացած սպիտակուցն է: D-դիմերի մակարդակի բարձացումը նկատվում է դաշտանային արյան մեջ:

Հետազոտության նպատակն է SERATEC PMB ժամանակակից ախտորոշիչ թեստի կիրառմամբ, առաջարկել նոր մեթոդական մոտեցում դատակենսաբանական փորձագիտական հետազոտություններում մարդու դաշտանային, դիակային և/կամ ծայրամասային արյան նմուշների տարբերակման համար:

Նյութեր և մեթոդներ

Աշխատանքում դաշտանային, ծայրամասային, դիակային արյունների տարբերակման համար, որպես ուղղորդիչ մարկերներ են ընտրվել մարդկային արյան մեջ առկա D-դիմերը և հեմոգլոբինը (Hb):

Գիտափորձը կատարվել է՝


- 10 առողջ կին դոնորներից (24-ից 40 տարեկան) կազմված կամավորների ներգրավմամբ, որոնք տրամադրել են ստերիլ թանձիֆե խծուծով 1-ին, 2-րդ և 3-րդ օրերի դաշտանային արյունը,
- 8 դիակային արյան (30-ից 65 տարեկան) հեղուկ նմուշ, որը վերցվել է տարբեր սեռի ներկայացուցիչներից՝ կենսաբանական մահը վրա հասնելուց 24-48 ժամվա ընթացքում և չորացվել հետագա հետազոտության համար ստերիլ թանձիֆե խծուծների վրա,
- ծայրամասային արյան նմուշներ են վերցվել 14 առողջ դոնորներից՝ 6 կին և 8 տղամարդ (25-60 տարեկան):

Չորացրած նմուշներից փորձարկման համար օգտագործվել է մոտավորապես 2x2մմ չափսերի թանձիֆե խծուծներ, որոնց հագեցվածությունը համապատասխանում է թեստի 400 նգ/մլ զգայունության արժեքին:

Փորձերի համար օգտագործվել է իմունոքրոմատոգրաֆիկ SERATEC PMB թեստը, որը միաժամանակ հայտնաբերում է մարդու արյան մեջ առկա հեմոգլոբինը և D-դիմերը: Փորձն իրականացնելու համար կիրառված SERATEC PMB թեստ հավաքածուն իր մեջ ներառում է՝ բուֆեր, որը անհրաժեշտ է հեղուկ նմուշների նոսրացման կամ չոր նմուշներից արյան անջատման համար, թեստ սկավառակ, որում օպտիմալ զգայունությունը մարդու հեմոգլոբինի համար 20 նգ/մլ է, իսկ D- դիմերի համար կազմում է 400 նգ/մլ [6,8]:

Թեստի բոլոր բաղադրիչները, ներառյալ՝ արյան նմուշները փորձարկումից առաջ բերվում են սենյակային ջերմաստիճանի, որին հաջորդում է հետազոտման ենթակա նմուշներից բուֆերի միջոցով լուծամզվածքի պատրաստում, որն էլ պահվում է սենյակային ջերմաստիճանում 2 ժամ: Այնուհետև, ստացված մզվածքից 5-ական կաթիլ կաթեցվում է թեստի շրջանաձև բացված համապատասխան փոսիկի մեջ: Արդյունքների վերլուծությունը կատարվում է առաջին 10

րոպեների ընթացքում (տես նկար 2) [6,8]:



Նկար 2. SERATEC PMB իմունոքրոմատոգրաֆիկ թեստի աշխատելու ընթացակարգը
(https://www.seratec.com/docs/user_instructions/2019/IFU_PMB_EN_2019-06.pdf)

Թեստի ճիշտ աշխատանքի պարագայում գրանցվում են հետևյալ արդյունքները.

- Նմուշում եթե առկա են մարդու հեմոգլոբին և D-դիմեր, ապա թեստի արդյունքների պատուհանում առաջանում է երեք ուղղահայաց գիծ՝ ստուգիչի C տարածքում, փորձարկման P տարածքում և փորձարկման M տարածքում: Երեք ուղղահայաց գծերի գույնի ինտենսիվությունը կարող է տարբեր լինել: Նմանատիպ արդյունքի գրանցման դեպքում հաստատվում է դաշտանային արյան առկայությունը:
- Թեստի արդյունքների պատուհանում եթե առաջանում է երկու ուղղահայաց գիծ՝ ստուգիչի C տարածքում և փորձարկման P տարածքում, ապա հաստատվում է ծայրամասային արյան առկայություն:
- Թեստի արդյունքների պատուհանում եթե առաջանում է երկու ուղղահայաց գիծ՝ ստուգիչի C տարածքում և փորձարկման M տարածքում, ապա քիչ հավանական է, որ նույն նմուշով D-դիմերը դրական է, իսկ հեմոգլոբինը բացասական: Ստացված արդյունքը խոսում է այն մասին, որ հետազոտման ենթակա նմուշն ունի բարձր կոնցենտրացիա որը բնորոշ է այսպես կոչված հուկ էֆֆեկտին /hook effect/: Հուկ էֆֆեկտը իմնուլոգիական դրսևորում է, որի ժամանակ հակամարմինների և հակաճինների կոնցենտրացիան լուծամզվացքում շատ բարձր է լինում և այն հանգեցնում է հակամարմինների իմունոկոմպլեքսներ առաջացնելու էֆեկտիվության նվազմանը [8]:

Միսալ արդյունքի դեպքում ստուգիչ գիծը (C) չի հայտնվում: Այս դեպքում թեստի աշխատանքը սխալ է և պետք է կրկնել՝ օգտագործելով նոր թեստ սկավառակ [6,8]:

Արդյունքներ և քննարկում

SERATEC PMB թեստի կիրառելիությունն արդյունավետ է մարդու դաշտանային, դիակային

և/կամ ծայրամասային արյան նմուշների տարբերակման համար: Նմանատիպ ուսումնասիրություններում թեստ սկավառակների կիրառման առավելությունը կայանում է նրանում, որ վերջիններս քիչ ժամանակատար, ծախսատար և հեշտ կիրառելի են, ինչպես նաև օժտված են բարձր զգայունությամբ: Թեստն աշխատում է 400 նգ/մլ խտությամբ հետքի հետ, ինչը շատ կարևոր է հանցագործության վայրում հայտնաբերված արյան հետքերի առաջացման պատճառահետևանքային կապի բացահայտման համար, որն էլ իր հերթին կարևոր դատական պրոցեսի ճիշտ ընթացքի իրականացման համար:

Գիտափորձի արդյունքում ստացվել են հետևյալ արդյունքները.

- SERATEC PMB թեստով դաշտանային արյան առկայության հաստատման հետազոտություններին մասնակցել են 24-40 տարեկան 10 կին դոնորներ (ըստ անամնեզի՝ առողջ), ովքեր ստերիլ թանգիֆե խճուճների վրա տրամադրել են իրենց դաշտանային ցիկլի 1-ին, 2-րդ և 3-րդ օրերի արյունները: Ստացված արյան նմուշների հետազոտությունները ցույց են տվել թեստի արդյունքների պատուհանում 3 ուղղահայաց գիծ՝ ստուգիչի (C) տարածքում, փորձարկման P տարածքում և փորձարկման M տարածքում: Չնայաց, որ բոլոր հետազոտելի նմուշներում հաստատվեց մարդկային ծագման դաշտանային արյան առկայությունը, այնուամենայնիվ գծերի գույնի ինտենսիվությունը ստացվել է տարբեր: Հետազոտված նմուշների գերակշիռ մասում հեմոգլոբինի առկայությունը հաստատող երիզների դեպքում ստացվել է մուգ գունավորում, իսկ D-դիմերի առկայությունը հաստատող երիզների գերակշիռ մասը ստացել է միջինից ցածր հագեցվածությամբ գունավորում (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1


D-դիմեր				Հեմոգլոբին			
	օր 1	օր 2	օր 3		օր 1	օր 2	օր 3
Դոնոր 1				Դոնոր 1			
Դոնոր 2				Դոնոր 2			
Դոնոր 3				Դոնոր 3			
Դոնոր 4				Դոնոր 4			
Դոնոր 5				Դոնոր 5			
Դոնոր 6				Դոնոր 6			
Դոնոր 7				Դոնոր 7			
Դոնոր 8				Դոնոր 8			
Դոնոր 9				Դոնոր 9			
Դոնոր 10				Դոնոր 10			

բարձր հագեցվածությամբ գունավորում
 միջին հագեցվածությամբ գունավորում
 միջինից ցածր հագեցվածությամբ գունավորում
 ցածր հագեցվածությամբ գունավորում
 հագեցվածության բացակայություն

- SERATEC PMB թեստով դիակային արյան առկայության հաստատման համար հետազոտվել են տարբեր սեռային պատկանելիության 30-ից 65 տարեկան, 8 դիակային արյան հեղուկ նմուշներ, որոնք չորացվել են ստերիլ թանգիֆե խճուճների վրա: Ստացված արյան նմուշների հետազոտությունները ցույց են տվել թեստի արդյունքների պատուհանում

երեք ուղղահայաց գիծ՝ ստուգիչի (C) տարածքում, փորձարկման P տարածքում և փորձարկման M տարածքում: Հետազոտված նմուշների գերակշիռ մասում և՛ հեմոգլոբինի, և՛ D-դիմերի առկայությունը հաստատող երիզները ստացել են մուգ հագեցվածությամբ գունավորում (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2



- SERATEC PMB թեստով ծայրամասային արյան առկայության հաստատման համար հետազոտվել են արական և իգական սեռի 25-60 տարեկան 14 դոնորներ: Ստացված արյան նմուշների հետազոտությունները ցույց են տվել թեստի արդյունքների պատուհանում երկու ուղղահայաց գիծ՝ ստուգիչի (C) տարածքում և փորձարկման P տարածքում: Հետազոտված նմուշների գերակշիռ մասում հեմոգլոբինի առկայությունը հաստատող երիզները ստացվել են մուգ հագեցվածությամբ, իսկ D-դիմերի առկայությունը հետազոտվող նմուշներում չի հաստատվել (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 3



Այդուհանդերձ, SERATEC PMB թեստով նմուշները վերլուծելիս պետք է հաշվի առնել հնարավոր սահմանափակումները: Դիմերները սովորաբար չեն հայտնաբերվում առողջ մարդկանց արյան մեջ, սակայն D-dimer- ի մակարդակը կարող է բարձր լինել սուր ծայրամասային թրոմ-

բռնմբղիզմով, հղիությամբ, նախորդ վիրահատությամբ կամ ակտիվ չարորակ ուռուցքներով հիվանդությունների դեպքում, ինչը կարող է հանգեցնել թեստի բացասական արդյունքի [9,10]:

Եզրակացություն

Ընդհանրացնելով ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի դատաբժշկական փորձաքննությունների բաժնի կենսաբանական հետքերի փորձաքննությունների բաժանմունքում կատարված փորձերը՝ կարող ենք փաստել, որ SERATEC PMB թեստի կիրառությունը հնարավորություն է տալիս փորձաքննության ներկայացված հետազոտելի օբյեկտներում արդյունավետ, արագ և ճշգրտորեն իրականացնել մարդու դաշտանային, դիակային և/կամ ծայրամասային արյան նմուշների տարբերակում:

Հարկ է նշել, որ SERATEC PMB թեստի միջոցով դաշտանային և դիակային արյան մեջ D-դիմերի հայտնաբերման առաջարկվող մեթոդական մոտեցման կիրառմամբ ստացված արդյունքների գնահատման առանձնահատկությունները դատակենսաբանական փորձագիտական հետազոտությունների բնագավառում հնարավորություն կստեղծեն լուծումներ տալու հետազոտական մի շարք խնդիրների, որոնցից է, մասնավորապես՝ կենսաբանական ծագման հետքերում դաշտանային և դիակային արյան պատկանելիության առավել ճշգրիտ կերպով որոշումը:

Գրականության ցանկ

- Holtkötter H, Dierig L, Schürenkamp M, Sibbing U, Pfeiffer H, Vennemann M (2014) Validation of an immunochromatographic D-dimer test to presumptively identify menstrual fluid in forensic exhibits. *Int J Legal Med* 129:37–41
- Haas C, Hanson E, Anjos MJ, Ballantyne KN, Banemann R, Bhoelai B, Borges E, Carvalho M, Courts C, De Cock G, Drobnic K, Dötsch M, Fleming R, Franchi C, Gomes I, Hadzic G, Harbison SA, Hartevelde J, Hjort B, Hollard C, Hoff-Olsen P, Hüls C, Keyser C, Maroñas O, McCallum N, Moore D, Morling N, Niederstätter H, Noël F, Parson W, Phillips C, Popielarz C, Roeder AD, Salvaderi L, Sauer E, Schneider PM, Shanthan G, Court DS, Turanská M, van Oorschot RAH, Vennemann M, Vidaki A, Zatkalíková L, Ballantyne J (2014) RNA/DNA co-analysis from human menstrual blood and vaginal secretion stains: results of a fourth and fifth collaborative EDNAP exercise. *Forensic Sci Int Genet* 8:203–212. <https://doi.org/10.1016/j.fsigen.2013.09.009>
- Roeder AD, Haas C (2013) mRNA profiling using a minimum of five mRNA markers per body fluid and a novel scoring method for body fluid identification. *Int J Legal Med* 127:707–721. <https://doi.org/10.1007/s00414-012-0794-3>
- Harbison S, Fleming R (2016) Forensic body fluid identification: state of the art. *Res Rep Forensic Med Sci Vol* 6:11. <https://doi.org/10.2147/RRFMS.S57994>
- Miyaishi S, Kitao T, Yamamoto Y, Ishizu H, Matsumoto T, Mizutani Y, Heinemann A, Puschel K (1996) Identification of menstrual blood by the simultaneous determination of FDP-D dimer and myoglobin contents, Japanese. *J Leg Med* 50:400–403
- SERATEC®. SERATEC® PMB user instruction. 2017. https://www.seratec.com/docs/user_instructions/PMB_en.pdf
- Basu D, Kulkarni R. Overview of blood components and their preparation. *Indian J Anaesth* 2014;58(5):529.
- SERATEC® PMB – user instruction 2019 https://www.seratec.com/docs/user_instructions/2019/IFU_PMB_EN_2019-06.pdf
- Sakurada K, Sakai I, Sekiguchi K, Shiraishi T, Ikegaya H, Yoshida K (2005) Usefulness of a latex

agglutination assay for FDP D-dimer to demonstrate the presence of postmortem blood. Int J Legal Med 119:167–171. <https://doi.org/10.1007/s00414-004-0517-5>

10. Beckman MG, Hooper WC, Critchley SE, Ortel TL. Venous thromboembolism: A public health concern. Am J Prev Med 2010;38(4):S495–501.

ОСОБЕННОСТИ ЛОКАЛИЗАЦИИ, ПРИМЕНЕНИЯ И ОЦЕНКИ РЕЗУЛЬТАТОВ МЕТОДА ОБНАРУЖЕНИЯ D-ДИМЕРОВ В МЕНСТРУАЛЬНОЙ И ТРУПНОЙ КРОВИ С ПОМОЩЬЮ ТЕСТА «SERATEC PMB» ПРИ ПРОВЕДЕНИИ СУДЕБНО-БИОЛОГИЧЕСКИХ ЭКСПЕРТНЫХ ИССЛЕДОВАНИЙ

Авагян Л.А., Тер-Геворкян А.Г.

В статье рассматриваются типичные признаки преступлений сексуального характера, в ходе которых возникает необходимость ответить на поставленный, со стороны обвинения, вопрос, какое происхождение имеют следы крови - менструальное или периферическое. В этой связи дифференциация периферической крови и менструальной жидкости может служить важным доказательством при раскрытии случаев сексуального домогательства.

Статья посвящена детальному анализу наиболее эффективного подхода по определению наличия менструальной, периферической и трупной крови в образцах крови. Обосновывается идея о том, что при помощи современного диагностического теста SERATEC PMB, который в настоящее время не применяется в Республике Армения, но признан ведущими судебно-биологическими лабораториями мира, возможно выполнение вышеперечисленных экспертных исследований. Основное внимание в работе акцентируется на разработке подходов, основанных на оценке достоверности результатов при проведении данного вида экспертизы, с учетом накопленного результативного международного опыта, имея цель последующее внедрение метода, основанного на диагностическом тесте SERATEC PMB, в деятельность экспертного сообщества Республики Армения. В статье проанализированы плюсы и минусы применения иммунохроматографического теста SERATEC PMB.

Ключевые слова: D-димер, гемоглобин, иммунохроматографический тест SERATEC PMB, трупная и/или периферическая кровь, менструальная кровь.

FEATURES OF LOCALIZATION, APPLICATION AND EVALUATION OF THE RESULTS OF THE METHOD FOR DETECTING D-DIMERS IN MENSTRUAL AND CADAVERIC BLOOD VIA «SERATEC PMB» TEST IN THE COURSE OF FORENSIC BIOLOGICAL EXPERT RESEARCH

Avagyan L., Ter-Gevorkyan A.

The article studies the typical sign of sexual crimes, during which it becomes necessary to answer the question raised by the prosecution, what is the origin of blood traces - menstrual or peripheral. In this regard, the differentiation of peripheral blood and menstrual fluid can serve as important evidence in disclosing cases of sexual harassment.

The article is devoted to a detailed analysis of the most effective approach for determining the presence of menstrual, peripheral and cadaveric blood in blood samples. The idea is substantiated that with the help of the modern diagnostic test SERATEC PMB, which is not currently used in the Republic of Armenia, but is recognized by the leading forensic biological laboratories in the world, it is possible to carry out the above expert studies. The main attention in the work is focused on the development of approaches based on assessing the reliability of the results during this type of expertise, taking into account the accumulated effective international experience, with the goal of further introducing the method based on the SERATEC PMB diagnostic test into the activities of the expert community of the Republic of Armenia. The article analyzes the pros and cons of using the SERATEC PMB immunochromatographic test.

Key words: *D-dimer, hemoglobin, immunochromatographic test SERATEC PMB, cadaveric and / or peripheral blood, menstrual blood.*

Ներկայացվել է խմբագրության 02.09.2021

Ընդունվել է տպագրության 29.11.2021

ՄՆԴԱՄԹԵՐՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՏՈՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՐԱԳ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Նիկոլյան Ս.Հ. , Յակոբյան Ա.Վ., Անդրեասյան Ն.Ա.

Փորձաքննությունների ազգային բյուրո,
Երևան, Հայաստան

Սննդամթերքի անվտանգության խնդիրն ունի կենսական նշանակություն, քանի որ անվտանգության կանոնները չպահպանելու դեպքում այն կարող է տարբեր ախտաճին մանրէների աղբյուր հանդիսանալ: Սննդի միջոցով տարածվող բազմաթիվ հիվանդությունների պատճառը դրանում առկա ախտաճին միկրոօրգանիզմներ են, քանի որ մարդու առողջությանը ուղղակիորեն սպառնացող հիվանդությունների հարուցիչներից բացի, ախտաճին մանրէները կարող են հանգեցնել բնակչության թունավորման՝ սննդի ախտահարման միջոցով: Հետևաբար, սննդի փորձաքննությունն ունի կարևոր նշանակություն հանրային առողջության պահպանման գործում (գործընթացում):

Սննդի փորձաքննության պարտադիր մաս են կազմում դրանց անվտանգության, մասնավորապես՝ մանրէաբանական ցուցանիշների որոշումը: Յուրաքանչյուր սննդամթերքի համար որոշվում են իրեն մենահատուկ մանրէաբանական ցուցանիշներ, որոնք սահմանվում և նորմավորվում են տվյալ սննդամթերքի ոլորտը վերահսկող տեխնիկական կանոնակարգերով:

Տեխնիկական կանոնակարգերով նորմավորվող մանրէների հայտնաբերումը սննդի փորձանմուշում մեծամասամբ իրականացվում է ընտրողական ազարային սննդամիջավայրերում աճած գաղութների հաշվարկման մեթոդով: Նշված մեթոդը համարվում է «ոսկե ստանդարտ», որն ընկած է ISO հավաստագրում ունեցող մի շարք միջազգային ստանդարտների հիմքում (ISO 4831:2006, ISO 6579-1:2017, ISO 6888-2:2021, ISO 4833-2:2013) և բավականին ճշգրիտ մեթոդ է, սակայն և ժամանակատար:

Երբեմն սննդային փորձաքննություններում էական է հետազոտության արդյունքների ստացման արագությունը, հատկապես զանգվածային թունավորումների դեպքում: Այս տեսանկյունից կարևոր է նոր, ավելի արագ իրականացվող մեթոդների կիրառումը, ինչպիսիք են ԴՆԹ-ի անջատման կիտերի վրա հիմնված իրական ժամանակի ՊՇՌ մեթոդը և նուկլեինաթթուների հաջորդականության վրա հիմնված ամպլիֆիկացումը (ՆՀԱ):

Բանալի բառեր. սննդամթերքի փորձաքննություն, մանրէաբանական աղտոտվածություն, կենսասենտորներ, ախտաճին բակտերիաներ, պոլիմերազային շղթայական ռեակցիա:

Սննդային վարակներ առաջացնող բակտերիաներից են *Campylobacter spp.*, *Salmonella spp.* և *Escherichia coli O157:H7*: *Listeria monocytogenes*, *Bacillus cereus*, *Bacillus anthracis*, *Escherichia coli*-ի էստերոհեմոռագիկ O103:H25, O26, O111, O115, O128, O145 շտամերը և վերջերս մեկուսացված, հակաբիոտիկների նկատմամբ կայունության պլազմիդ կրող O104:H4 շտամը, *Staphylococcus aureus*-ի ջերմակայուն էստերոտոքսիններ կողմավորող շտամերը, *Clostridium*

Թղթակցական հասցեն՝ Սոնա Հազարապետի Նիկոլյան, սննդամթերքի և խմիչքների փորձաքննությունների բաժնի փորձագետի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ, Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի ասպիրանտ, ք. Երևան, Իսակովի 24, e-mail: nikolyan.sona@gmail.com

botulinum, *Clostridium perfringens*, *Yersinia enterocolitica*, *Vibrio spp.*, *Aeromonas spp.*, *Shigella spp.* և *Mycobacterium bovis*, վիրուսները և նախակենդանիները, որոնք փոխանցվում են սննդի սպառման միջոցով [1]:

Հում միսը, կաթը, սերմերը և բանջարեղենը տարբեր բակտերիաների աղբյուր են: Սննդի որոշակի տեսակներ (կաթը, կրեմը, միսը) պետք է զերծ լինեն ախտածին մանրէներից, ինչպես *L. monocytogenes* և *S. aureus*-ից: Որոշ ախտածինների առկայություն, անգամ չնչին քանակությամբ, արդեն իսկ վտանգ է ներկայացնում, ինչպես սառը պայմաններում բազմացող, պսիխրոֆիլ բակտերիա *L. monocytogenes*-ը: Իսկ հյուրանոցների ջրատար խողովակներում և սանհանգույցներում *Legionella pneumophila*-ի առկայությունը համարվում է առողջության համար սպառնալիք, երբ բակտերիայի խտությունը հասնում է 1լ ջրում մի քանի հազար բջջի [2]:

Սննդի փորձաքննության մեջ ախտածին բակտերիաների հայտնաբերման ստանդարտ մանրէաբանական մեթոդն ագարային միջավայրում համապատասխան բակտերիայի գաղութների հաշվարկն է: Այն մի քանի օր է պահանջում ախտածինների հայտնաբերման համար: Բացի վերոնշյալ մեթոդից, առկա են նաև այլընտրանքային մեթոդներ, որոնք թույլ են տալիս հայտնաբերել մանրէները ավելի սեղմ ժամանակահատվածում, քան 24-48 ժ-ն է: Այլընտրանքային մեթոդները թույլ են տալիս նույնականացնել մանրէները, նույնիսկ եթե դրանք չեն հասել էքսպոնենցիալ աճի առավելագույն պիկին:

Բազմաթիվ հետազոտություններում օգտագործվել են բակտերիաների իմունամագնիսական տարանջատում լուծույթներից կամ սննդային նմուշներից: Ներկայումս գոյություն ունեցող Pathatrix Auto System-ը վալիդացվել և երաշխավորվել է օգտագործել *Salmonella spp.* և *Listeria spp.* բակտերիաների հայտնաբերման համար [1]:

Salmonella բակտերիայի հայտնաբերման համար մեծամասամբ փորձաքննության են ենթարկվում տավարի, հավի, խոզի միսը, ձուն, մրգերը, ծիլերը, բանջարեղենը, նույնիսկ վերամշակված սնունդը: Ախտածին մանրէներով ախտոտված սնունդը սովորաբար նորմալ է բուրում, որն էլ դժվարացնում է զգայաբանական ցուցանիշներով սննդային աղտոտման հայտնաբերումը [3]:

Բակտերիալ շտամերի նույնականացման ամենաբարձր զգայունություն ձեռք է բերվել մոլեկուլային մեթոդների շնորհիվ, որոնք հիմնված են պոլիմերազային շղթայական ռեակցիայի (իրական ժամանակի ՊՇՌ, թվային ՊՇՌ) վրա, ինչպես նաև իզոցերմային բազմապատկման մեթոդների վրա, ինչպես շրջանաձև բազմապատկումը (RCA), ռեկոմբինազ-պոլիմերազային բազմապատկումը (RPA), օղակով-միջնորդված իզոցերմային բազմապատկումը (LAMP): Բացի քանակական, իրական ժամանակի ՊՇՌ-ի միջոցով ԴՆԹ-ի քանակական գնահատումից, մշակվել են նաև այլ մեթոդներ, որոնք հիմնված են թիրախային ԴՆԹ-ի հիբրիդացման վրա՝ մակերեսին կապվող մենահատուկ զոնդերով: ԴՆԹ մեթոդների հայտնաբերման սահմանը 1մլ նմուշում տատանվում է 10-100 գաղութ առաջացնող միավորների սահմաններում [4, 5]:

Մի շարք մեթոդների դեպքում մանրէների նույնականացման համար անհրաժեշտ է, որ մանրէական կուլտուրան հասնի իր աճի էքսպոնենցիալ փուլին: Այսինքն, սկզբունքայնորեն անհրաժեշտություն է առաջացել հաղթահարել այս խոչընդոտը: Օրինակ, սննդի բաղադրակազմը դժվարեցնում է դրանից բակտերիաների անջատումը և պարունակում է ՊՇՌ արգելակիչներ, որոնք կարող են ազդել մեթոդի զգայունության վրա: Բացի այդ, բակտերիաները ենթարկվում են սթրեսի և աճի համար պահանջում են ավելի երկար ժամանակ:

Սննդի փորձաքննության մեջ կարող է կիրառվել ISO հավաստագրում ունեցող երկու նույնականացման մեթոդ. ընտրողական ագարային սննդամիջավայրերում աճած գաղութների հաշվարկման և ԴՆԹ-ի անջատման կիտերի վրա հիմնված իրական ժամանակի ՊՇՌ մեթոդը:

Նշված մոլեկուլային մեթոդը զգայուն է 10-100 բակտերիաների առկայության դեպքում (մինչև 50 մլ ծավալի դեպքում իմունամագնիսական տարանջատման հետ համակացված) [4-6]:

Բացի վերոնշյալներից, սննդի փորձաքննության մեջ օգտագործվում են նաև այլ կենսասենսորային մեթոդներ. մակերեսային պլազմոնային ռեզոնանսի (ՄՊՌ), էլեկտրաքիմիական դիմադրության սպեկտրոսկոպիայի (ԷԴՍ) և նուկլեինաթթուների վրա հիմնված մեթոդներ: Առավել զգայուն իմունասենսորները հիմնված են բակտերիալ տեսակներին մենահատուկ հալամարմինների, ապտամերների և բակտերիալ հակաձինների (ինչպես բակտերիաֆագի պոչի մակերեսային սպիտակուցը) վրա [7-9]:

Նշված մեթոդները որոշակի պայմաններ են պահանջում սպիտակուցների միջև օպտիմալ կապի հաստատման համար, ինչպես նաև այլ բարձր խնամակացությամբ նյութեր, գնդիկներ (Luminex, Austin, TX, USA), ոսկով պատված մակերեսներ, թաղանթներ, որոնք հարմար են հալամարմին-հակաձին կոմպլեքսների քրոմատոգրաֆիկ մեթոդով առանձնացման համար [10]:

Ներկայումս շատ կենսասենսորների վրա հիմնված մեթոդները դեռ աշխատատար, թանկարժեք և ոչ դյուրին իրականացվող կիրառություններ են և նպատակահարմար չեն սննդային փորձաքննություններում օգտագործման համար:

Իդեալական կենսասենսորը պետք է հայտնաբերի թիրախ մոլեկուլները ուղղակիորեն՝ առանց զոնդավորված լիգանդների կամ բազմապիսի լվացող միջոցների: Արդյունավետ վերլուծություն կատարելու համար պետք է լուծել մի քանի խնդիրներ: Այսպես, առաջինը՝ պետք է օգտագործել համապատասխան մակերեսներ, երկրորդը՝ արդյունավետ զոնդի (հալամարմիններ, կապող սպիտակուցներ, ապտամերներ) առկայությունն է, որը կունենա կայուն խտություն՝ բարձր վերարտադրելիությամբ թիրախների հայտնաբերման համար, երրորդը՝ ձեռք բերել մեթոդի բարձր զգայունություն նույնիսկ թիրախների ցածր կոնցենտրացիաների դեպքում, քանի որ շատ ախտածին մանրէներ սննդում առկա են լինում համեմատաբար քիչ քանակներով:

Ստորև ներկայացվում է արագ իրականացվող մեթոդների ընդհանրական բնութագրերը սննդի մանրէաբանական փորձաքննության մեջ ավելի լայն կիրառություն ապահովելու նպատակով:

1. Մակերեսային պլազմոնային ռեզոնանսի մեթոդ (ՄՊՌ)

Մակերեսային պլազմոնային ռեզոնանսի կենսասենսորներն օգտագործվել են ախտածին մանրէների ուղղակի կամ անուղղակի հայտնաբերման համար [11]: ՄՊՌ-ն կարող է օգտագործվել իմունասենսորների միջոցով հարստացված արգանակներում և հեղուկներում սննդի ախտածինների հայտնաբերման համար:

ՄՊՌ տեխնիկան թույլ է տալիս իրականացնել ոսկե հաստ թիթեղի և դիէլեկտրիկ մակերեսի կամ թափանցիկ նյութի (ինչպիսին են հեղուկները) միջև տեղի ունեցող քիմիական և կենսաքիմիական փոխազդեցությունների մշտադիտարկում տվյալ պահին: ՄՊՌ-ն օպտիկական տեխնիկա է, որն օգտագործում է էլեկտրամագնիսական ալիքների ֆենոմենը սենսորի մակերեսին շատ մոտ գտնվող ռեֆրակտիվ գործակցի փոփոխությունները չափելու համար:

Ընկնող, միատարր լույսի ճառագայթով արտադրված էլեկտրամագնիսական ալիքն ի վիճակի է փոխազդել ազատ էլեկտրոնների (պլազմոնների) հետ մետաղական թաղանթում ընկնող լույսի հատուկ (α) անկյան տակ (ՄՊՌ անկյուն): Անկյունային դիրքը խիստ զգայուն է մետաղ-դիէլեկտրական մակերեսի ցանկացած փոփոխության նկատմամբ:

Ուսումնասիրված հակաձնի և հալամարմնի միջև պարտադիր կապի առաջացումը դիտարկ-

վում է նվազագույն անկյունից դեպի ավելի բարձր անկյուններ հերթափոխի կամ ֆիքսված անկյան տակ անդրադարձման տատանումների (կորի առավելագույն թեքությանը համապատասխան) դեպքում: Այսպիսով, հնարավոր է պահպանել ՄՊՌ-ի անդրադարձման կորը լույսի անկման տարբեր անկյունների դեպքում: Հարկ է նշել, որ 10,000 ԳԱՄ/մլ կոնցենտրացիայով *L. pneumophila*-ի բջջային սուսպենզիան հայտնաբերվել է ՄՊՌ-ի իմունասենսորների միկրոհեղուկային համակարգի միջոցով [12]:

1.1 Էլեկտրաքիմիական դիմադրության սպեկտրոսկոպիա (ԷԴՍ)

Էլեկտրաքիմիական դիմադրության սպեկտրոսկոպիան (ԷԴՍ) լայնորեն կիրառվող մեթոդ է կենսասենսորային սարքերի ոլորտում և ներառում է մեկանգամյա չիպեր [13, 14]: Յուրաքանչյուր էլեկտրոդ խորհուրդ է տրվում օգտագործելուց հետո դեն նետել, որպեսզի կանխվի դրա միջոցով փոխանցվող աղտոտումը: Բարձր զգայունության և հեշտ կառուցվածքի շնորհիվ ԷԴՍ-ն լայնորեն կիրառվում է կենսասենսորների արտադրությունում, հատկապես մանրէաբանության ոլորտում: Ի դեպ, 1990թ-ից դիմադրության վրա հիմնված մեթոդներն օգտագործվում են բակտերիաների նույնականացման մեջ:

Այս մեթոդը գրանցում է բակտերիաների նյութափոխանակության և բջջի աճի միջոցով մակածված սենսորների էլեկտրական դիմադրությունը, որը կենդանի բջիջների նյութափոխանակային իոնների անջատման արդյունք է (կատարվում արդյունքում առաջացած ածխաթթու գազ, օրգանական թթուներ և բջջի թաղանթի միջոցով իոնների փոխանակում): Այս մեթոդի կիրառության օրինակ է կենսունակ և մահացած բջիջների տարբերակումը [15, 16]: Այն օգտագործվել է նաև Յանգի և գործընկերների կողմից, ովքեր օգտագործել են էլեկտրոդների 3 դասավորություն՝ *S. typhimurium*-ի կենսունակ բջիջների էլեկտրական դիմադրության միջոցով հայտնաբերման համար [17, 18]:

Քանի դեռ էլեկտրոդների մակերևույթում փոփոխություններ տեղի չեն ունենում, համակարգը կարելի է նկարագրել պարզեցված համարժեք շրջանի տեսքով, որը բաղկացած է երկու էլեկտրոդների միջև լուծույթի հետ կապված դիմադրատարրից և յուրաքանչյուր էլեկտրոդի համար երկշերտ կոնդենսատորից: Նշված երկու բաղադրիչները որոշում են ամբողջ դիմադրությունը՝ կախված հաճախությունից: Բարձր հաճախությունների դեպքում դիմադրությունը հիմնականում պայմանավորված է դիմադրատարրով, մինչդեռ ցածր հաճախությունների դեպքում՝ երկշերտ կոնդենսատորով: Ցույց է տրված, որ ω կոնդենսատորի, ω դիմադրատարրի դիմադրության չափումները կարող են օգտագործվել բակտերիաների քանակական որոշման համար [17]:

Անցած մի քանի տարիների ընթացքում միկրոսարքերի արտադրության նվաճումների շնորհիվ իրականացվել են դիմադրության չափման վրա հիմնված կենսասենսորների չափերի կոմպակտացում դեպի չիպային ձևաչափ, որն առաջարկում է նոր հնարավորություններ բակտերիաների հայտնաբերման ոլորտում: Այս առումով, թվայնացված միկրոէլեկտրոդներն օգտագործվել են մաքուր կուլտուրայում և կաթի նմուշներում դիմադրության չափումների միջոցով *S. typhimurium*-ի քանակական հայտնաբերման համար [18]: Թվայնացված միկրոէլեկտրոդների դիմադրության չափման սենսորների միջոցով *S. typhimurium*-ի հայտնաբերման ժամանակը ավելի կարճ է դասական դիմադրության չափման վրա հիմնված մեթոդների համեմատ, իսկ իր բնույթով՝ առավել մոտ է էլեկտրաքիմիական մեթոդներին: Հայտնաբերման սահմանը 0.5 ԳԱՄ/մլ է, իսկ ժամանակը՝ 10 Ժամից ավել [18]:

Բացի նշվածներից, միկրոէլեկտրոդային համակարգերը թույլ են տալիս էլեկտրոդային մակերեսներին կապվել բակտերիալ մենահատուկ բջիջների հետ: Արդյունքում դիտվում են մենա-

հատուկ կենսաճանաչման ռեակցիաներ, որոնց շնորհիվ այս մեթոդը հնարավորություն է տալիս տարբեր բակտերիալ խմբերից հայտնաբերել որոշակի խումբ, նույնիսկ բարդ խմբավորումների առկայության պայմաններում: Ավելին, հետազոտության համար անհրաժեշտ ժամանակը բավականին կրճատվում է՝ 2 ժամից պակաս, համեմատած աճի վրա հիմնված դիմադրության չափման մեթոդների հետ, որոնք պահանջում են առնվազն 24 ժամ: Օրինակ 2002 թ-ին Ռուս-նր և գործընկերները զարգացրեցին դիմադրության չափման վրա հիմնված կենսասենսորներ *Escherichia coli* O157:H7-ի հայտնաբերման համար էլեկտրոդների վրա իմմոբիլիզացված բակտերիաների հետ մենահատուկ հակամարմինների փոխազդեցության միջոցով [19]: *Escherichia coli* O157:H7-ի տարածման հիմնական աղբյուրը աղտոտված ջուրն ու սնունդն է, մասնավորապես՝ հում կաթը, չպաստերիզացված կաթնամթերքը, մրգահյութերը:

Նշված մթերքների փորձաքննության մեջ առաջնային է համարվում աղիքային խմբի մանրէների, հատկապես *Escherichia coli* O157:H7-ի առկայության որոշումը: Երկրորդային հակամարմինը կոնյուգացվում է ալկալին ֆոսֆատազի հետ, որը որպես զոնդավորված ֆերմենտ օգտագործվել է ազդանշանների ուժեղացման համար: Այս կենսասենսորները կարող են հայտնաբերել թիրախ բակտերիան՝ 6×10^3 բջիջ/մլ-ի սահմանային արժեքի դեպքում:

Յանգը և գործընկերները կարողացել են խուսափել երկրորդային զոնդավորված հակամարմինների օգտագործումից և զարգացրել են զոնդից անկախ իմունասենսորներ վերոնշյալ բակտերիալ շտամի (*E. coli* O157:H7) հայտնաբերման համար՝ օգտագործելով ինդիոմի թիթեղի օքսիդի ավելի բարձր զգայունությունը [20]:

Փաստորեն, երբ բակտերիալ բջիջները ճանաչվում են էլեկտրոդների վրա իմմոբիլիզացված, մենահատուկ հակամարմինների կողմից, ամրանում են մակերեսին և մեծացնում են էլեկտրոնի փոխանցման դիմադրությունը, որն հնարավոր է չափել առանց որևէ լրացուցիչ քայլի:

Ռադիակրիշնան և գործընկերները կարողացել են հայտնաբերել *L. monocytogenes*-ը էլեկտրաքիմիական դիմադրության սպեկտրոսկոպիայի միջոցով՝ օգտագործելով ոսկե էլեկտրոդի վրա իմմոբիլիզացված մկան մոնոկլոնալ հակամարմին [21]:

L. monocytogenes-ը առկա է հում, չպաստերիզացված կաթում և պանիրներում, պաղպաղակում, բանջարեղենում, մրգերում, թռչնամսում, ձկնամթերքում: Նշված սննդամթերքի մանրէաբանական ցուցանիշների թվում պարտադիր հետազոտվում է *L. monocytogenes*-ի առկայությունը: Ինչքան երկար սառնարանում պահվի սնունդը, այնքան ավելի մեծանում է վերոնշյալ ախտածինի առկայության հնարավորությունը: Ախտածնի աճի կանխման համար անհրաժեշտ է սառնարանի ջերմաստիճանը սահմանել $+4$ °C, իսկ սառցախցիկինը՝ -18 °C [3]:

Ռադիակրիշնան և գործընկերները հաղորդել են նաև հայտնաբերման 5 ԳԱՄ/մլ և 4 ԳԱՄ/մլ սահմաններ համապատասխանաբար իդեալական լուծույթների և լուրիկի ֆիլտրված էքստրակտի համար:

Այս մեթոդների զգայունության մեծացման համար էլեկտրոդների արտադրության մեջ օգտագործվել են նորարարական նյութեր, հատկապես՝ նանոնյութեր (նանոմասնիկներ, նանոլարեր, նանոխողովակներ և գրաֆեն): Օրինակ, Յանգը և գործընկերները ստեղծել են իմունասենսոր *Salmonella* spp.-ի հայտնաբերման համար՝ օգտագործելով ապակե ածխածնի վրա նստեցված ոսկե նանոմասնիկներ, որը բարելավել է մեթոդի զգայունությունը և կայնությունը [18]:

Իսկ Վանգն առաջարկել է օգտագործել TiO_2 -ի նանոլարեր, որոնք միացված են ոսկու միկրոէլեկտրոդներով և աշխատում են հակալիստերիային հակամարմիններով՝ *Listeria monocytogenes*-ի արագ և հեշտ հայտնաբերման համար: Այս դեպքում հաղորդվել է բարձր զգայունություն և բարձր մենահատկություն՝ արագ արձագանքման ժամանակի հետ համատեղ [22]:

2. Նուկլեինաթթուների վրա հիմնված մեթոդներ

Նուկլեինաթթուների վրա հիմնված մեթոդները գործածում են թիրախ ախտաճիններում առկա ԴՆԹ-ի կամ ՌՆԹ-ի մենահատուկ հաջորդականությունների հայտնաբերման տեխնիկան: Վերջինս կատարվում է թիրախ նուկլեինաթթվի հաջորդականության արհեստականորեն սինթեզված օլիգոնուկլեոտիդների (զոնդեր կամ պրայմերներ) հետ հիբրիդացման միջոցով: Պրայմերները կամ զոնդերը կոմպլեմենտար են թիրախ հաջորդականությանը [23]:

Շատ ախտաճին բակտերիաներ, ինչպես *Clostridium botulinum*, *Vibrio cholerae*, *Staphylococcus aureus* և *Escherichia coli* O157 արտադրում են թույններ, որոնք ունակ են պատճառել սննդի միջոցով հարուցվող հիվանդություններ [24-27]: Ախտաճինների թույնների սինթեզն ապահովող գեները կարող են հայտնաբերվել նուկլեինաթթուների վրա հիմնված մեթոդների միջոցով [28]: Ավելին, անորոշ ֆենոտիպային բնութագրիչներ ցույց տվող ախտաճինները, ինչպես հիպպուրատ բացասական *Campylobacter jejuni*-ի շտամերը, կարող են նույնականացվել և հաստատվել վերոնշյալ մեթոդով [29]: Նուկլեինաթթուների վրա հիմնված մեթոդները հայտնաբերում են մենահատուկ գեներ թիրախ ախտաճիններում, հետևաբար կանխում են ոչ հավաստի արդյունքերի ստացումը: Նման մեթոդների շարքին են դասվում սովորական պոլիմերազային շղթայական ռեակցիան (ՊՇՌ), բազմաբաղադրիչ ՊՇՌ-ն, իրական ժամանակի կամ քանակական ՊՇՌ-ն, նուկլեինաթթուների հաջորդականությունների վրա հիմնված բազմապատկումը, հանգույցներով միջնորդված իզոցերմային բազմապատկումը և միկրոչպերի տեխնոլոգիաները:

ա. Պոլիմերազային շղթայական ռեակցիա (ՊՇՌ)

ՊՇՌ-ն երեք փուլով ընթացող շղթայական գործընթաց է, որը հիմնված է թիրախ ԴՆԹ-ի մենահատուկ հաջորդականության բազմապատկման վրա [30]: ՊՇՌ-ն օգտագործվել է մեծ քանակով սննդային ախտաճին բակտերիաների հայտնաբերման համար, ինչպես *Listeria monocytogenes*, *Escherichia coli* O157:H7, *Staphylococcus aureus*, *Campylobacter jejuni*, *Salmonella spp.* և *Shigella spp.* [31- 35]:

2.1.1 Բազմաբաղադրիչ կամ մուլտիպլեքս ՊՇՌ

Բազմաբաղադրիչ ՊՇՌ-ն բազմաթիվ թիրախային գեների միաժամանակյա բազմապատկման միջոցով թույլ է տալիս իրականացնել ախտաճինների ավելի արագ հայտնաբերում սովորական ՊՇՌ-ի համեմատ: Մուլտիպլեքս ՊՇՌ-ի (մ-ՊՇՌ) դեպքում օգտագործվում է պրայմերների մի քանի խումբ: Պրայմերների ձևաչափը շատ կարևոր է մ-ՊՇՌ-ի զարգացման համար, քանի որ բոլոր պրայմերները պետք է ունենան նուկլեինաթթվի շղթային միանալու միևնույն ջերմաստիճանը [28]: Բացի ձևաչափից, կարևոր է պրայմերների կոնցենտրացիան: Մ6-ՊՇՌ-ի դեպքում հնարավոր է պրայմերային դիմերների առաջացում, որը բացասաբար է ազդում մեթոդի արդյունավետության վրա: Նշված թերությունը հաղթահարելու համար հարկավոր է պրայմերների բավարար քանակ [28]:

Նախկինում, մ-ՊՇՌ-ն օգտագործվել է միայն 2-3 ախտաճին հայտնաբերելու համար: Ներկայումս մ-ՊՇՌ-ն ավելի առաջադեմ է և կարող է միաժամանակ հայտնաբերել մինչև 5 կամ ավել ախտաճին:

Հետազոտողների կողմից *Salmonella Enteritidis*, *Staphylococcus aureus*, *Shigella flexneri*, *Listeria monocytogenes*, և *Escherichia coli* O157:H7-ի միաժամանակյա հայտնաբերման հա-

մար իրականացվել է մ-ՊՇՌ 5 զույգ պրայմերների օգտագործմամբ, որոնք թիրախավորել են համապատասխանաբար վարակման համար պատասխանատու սպիտակուցի (*invA*), 16S r-ԴԼԹ-ի, վարակման պլազմիդային H հակաձնի (*ipaH*), լիստերիոլիզին O-ի (*hlyA*) և ինտիմինի (*eaeA*) գեները [36]:

Զարգացվել է նաև նոր մ-ՊՇՌ մեթոդ, որը հնավարություն է տալիս հայտնաբերել և բարձր ճշգրտությամբ տարբերակել *ListeriaH*-ի 6 տեսակ միաժամանակ միևնույն տարրայում: Այդ 6 տեսակներն են *Listeria monocytogenes*, *Listeria grayi*, *Listeria ivanovii*, *Listeria innocua*, *Listeria welshimeri* և *Listeria seeligeri*: Հայտնաբերման սահմանը 7.58×10^4 գենոմային ԴԼԹ-ի պատճեն է [37]:

Մ-ՊՇՌ-ի հետագա բարելավումը ներառում է նոր GeXP-ՊՇՌ-ի գործարկումը 6 սննդային ախտածինների՝ *Salmonella enterica*, *Listeria monocytogenes*, *Staphylococcus aureus*, *Escherichia coli* O157:H7, *Shigella* spp. և *Campylobacter jejuni*, միաժամանակյա հայտնաբերման համար տարբեր ոլորտներում, այդ թվում՝ սննդի փորձաքննության ոլորտում [35]:

 24. Постановление Правительства Российской Федерации от 4 июля 2013 г. № 565 (В редакции постановлений Правительства Российской Федерации от 01.06.2020 № 803).
 25. Приказ Министра обороны Республики Казахстан от 29 января 2013 года № 37 (с изменениями по состоянию на 02.02.2018 г.).
 26. Azərbaycan Respublikası nazirlər kabinetinin 2008-ci il 29 fevral tarixli, 59 nömrəli qərarı ilə təsdiq edilmişdir: Hərbi-həkim ekspertizası haqqında.
 27. ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշում:

ОСОБЕННОСТИ ВОЕННО-МЕДИЦИНСКОЙ ЭКСПЕРТИЗЫ СКОЛИОЗА В РЯДЕ СТРАН

Чарчян А. Г., Саакян С.С., Мартиросян Т. Р., Саакян А. С.

В статье представлен сравнительный анализ подходов проведения военно-медицинских экспертиз сколиоза в Республике Армения, Российской Федерации, Республике Казахстан, Республике Беларусь, Азербайджанской Республике.

Описаны критерии экспертных исследований сколиоза, функциональные особенности сколиоза, предопределения возможных последствий статических нарушений позвоночника во время военной службы, а также изложен анализ методов исследования.

Ключевые слова: *военно-медицинская экспертиза, сколиоз, нарушение функции, экспертиза, критерии годности к военной службе.*

FEATURES OF THE MILITARY MEDICAL EXAMINATION OF SCOLIOSIS IN A NUMBER OF COUNTRIES

Charchyan A., Sahakyan S., Martirosyan T., Sahakyan A.

The article presents a comparative analysis of the approaches of military medical examination of scoliosis in the Republic of Armenia, the Russian Federation, the Republic of Kazakhstan, the Republic of Belarus, the Republic of Azerbaijan.

The functional features of scoliosis, the predestination of possible consequences of static spinal disorders during military service, the analysis of research methods are presented.

Key words: *military medical examination, scoliosis, functional impairment, examination, criteria of fitness for military service.*

Ներկայացվել է խմբագրության 28.06.2021

Ընդունվել է տպագրության 27.10.2021

ГИСТОЛОГИЧЕСКИЕ И ГИСТОХИМИЧЕСКИЕ АСПЕКТЫ ОЦЕНКИ ОПРЕДЕЛЕНИЯ ДАВНОСТИ ВНУТРИЧЕРЕПНЫХ ГЕМАТОМ ПРИ ЧЕРЕПНО-МОЗГОВЫХ ПОВРЕЖДЕНИЯХ

Саркисян П.Г. , Мхитарян К.Г.

Национальное бюро экспертиз,
Ереван, Армения

Нарастающая частота, высокая смертность и инвалидность черепно-мозговых травм в настоящая время является актуальной социальной проблемой и считается одним из ключевых направлений современной судебно-медицинской науки. В экспертной практике давность черепно-мозговых травм и внутричерепных гематом в основном определяется гистологическими методами исследования. Однако в ряде случаев полученные результаты не соответствуют времени получения травмы. Причинами таких неточностей при определении давности являются физическое состояние, возраст, степень разрушения вещества мозга, объем гематомы, сосудистая патология и пониженная реактивность организма пострадавшего. Отмечается, что существенным дополнением к гистологическому методу является доступный гистохимический метод трехцветной окраски фибрина. Ценность метода заключается в том, что давность повреждения определяется на ранних стадиях.

Ключевые слова: черепно-мозговая травма, внутричерепная гематома, судебно-медицинская экспертиза, давность повреждения, гистологический и гистохимический методы.

Черепно-мозговая травма является наиболее часто встречающимся повреждением и составляет приблизительно 40% от всех видов травм [1]. В соответствии со статистикой, опубликованной Всемирной организацией здравоохранения, динамика прироста количества черепно-мозговых травм составляет примерно 2% в год. Важно подчеркнуть, что высокая летальность и инвалидность, связанная с черепно-мозговыми травмами, на текущий момент приобретает выраженный социальный характер, безусловно, является актуальной проблемой и поэтому относится к числу ключевых направлений современной судебно-медицинской науки [2].

Черепно-мозговые травмы чаще всего встречаются у лиц наиболее активной категории населения. По данным ряда публикаций, возраст пострадавших лиц колеблется от 21 - 50 лет, а повреждения являются в большинстве своем результатом как воздействия тупых твердых предметов, так и дорожно-транспортных происшествий [3,4].

При закрытой черепно-мозговой травме случаи смертельных исходов чаще обусловлены образованием внутричерепных гематом и повреждением вещества головного мозга. При этом следует иметь в виду, что продолжительность жизни пострадавших может составлять от нескольких минут до нескольких часов и даже суток. В действительности, отталкиваясь от обобщенного практического опыта, следует подчеркнуть, не вдаваясь в подробности, что, на наш взгляд, важное значение имеют возраст, пол, обстоятельства травмы, преморбидное состояние до получения травмы, локализация гематом и их размеры. В контексте перечисленных особенностей, особого внимания заслуживают опубликованные материалы ФГАУ «Национальный

Адрес для корреспонденции: Саркисян Пётр Геворкович, эксперт отделения гистологических и химических экспертиз Отдела судебно-медицинских экспертиз Национального бюро экспертиз Республики Армения, 0004, РА, г.Ереван, пр. Адмирала Исакова, 24, Sarkisian.petr2018@yandex.ru

медицинский исследовательский центр нейрохирургии имени академика Н.Н.Бурденко” МЗ РФ, ученые которого, беря за основу результаты анализов компьютерной томографии (КТ), сформулировали следующие обобщенные распределения внутримозговых гематом по их локализации: лобные доли -48%, височные -34%, теменные -21%, затылочные-2%, мозжечок-5%, а также произвели разделения по размеру внутримозговой гематомы на:

-малые - максимальный диаметр в наиболее демонстративном аксиальном срезе на КТ результатах равен или больше 1,5 см и меньше 3 см (объем для сферы составляет от 2 до15куб. см);

-средние - максимальный диаметр равен или больше 3 см и меньше 4,5 см (15-45 куб. см);

- большие - максимальный диаметр равен или больше 4,5 см (более 45 куб. см).

Авторы исследований упомянутого центра отмечают, что анализ компьютерных томограмм показал высокую степень корреляции между объемом и максимальным диаметром, и следовательно, ориентация на диаметр в оценке объема внутримозговых гематом, на текущий момент не только проста и удобна, но и достаточно надежна[4].

По данным других научных источников объем внутримозговых гематом колеблется от 30 до 150 мл, при этом полость гематомы нередко имеет округлую шарообразную или вытянутую форму, а травматические гематомы, наряду с этим, расположены в белом веществе полушарий обычно субкортикально - в отличие от внутримозговых гематом сосудистого генеза [5].

Следует признать, что, несмотря на непрерывно возрастающую роль гистохимических, иммуногистохимических, ультрамикроскопических и количественных методов анализа, в патоморфологии, тем не менее, основным методом морфологической диагностики давности внутричерепных гематом при черепно-мозговых травмах по-прежнему остается недорогой и нетрудоемкий качественный метод гистологического исследования[6].

Справедливости ради, следует признать, что динамика морфологических изменений в очагах ушиба и размозжения вещества головного мозга и гематом изучена достаточно полно. Так, на обширном аутопсионном материале выполнены фундаментальные исследования черепно-мозговой травмы, а на светооптическом уровне установлена и детально изучена чёткая последовательность развития в веществе головного мозга и его оболочках деструктивных травматических изменений, с реактивными и последующими репаративными тканевыми процессами [7].

В судебно-медицинской экспертной практике исключительно важным вопросом является диагностика давности внутричерепных гематом умерших людей от черепно-мозговых травм. Распространённым способом является гистологические методы диагностики. Для решения данной задачи необходимо иметь в наличии классический набор реактивов и оборудование, используемые в каждодневной практической работе гистологов. Достаточно часто для обнаружения в тканевом срезе двухвалентного железа (ферритина и гемосидерина) используется также доступный метод окраски срезов желтой кровяной солью с получением берлинской лазури синего цвета (реакции Перлса [6] или Тирман-Шмельцера [8]).

Гистологическая оценка в большинстве своем производится либо описанием исследуемых серийных гистологических срезов и анализом полученных результатов, либо используются соответствующие таблицы, где выявленные морфологические находки оцениваются по баллам. К таким таблицам в первую очередь относятся методические рекомендации, предложенные Российским научно-исследовательским нейрохирургическим институтом имени профессора А.Л. Поленова [9]. В предлагаемых методических рекомендациях впервые была сделана попытка

представить разработанные ориентиры в виде таблиц, в которых приведена динамика макро- и микроскопических признаков, связанных с временным фактором. К каждому критерию в таблицах был дан краткий комментарий.

Несмотря на тот факт, что данному вопросу посвящены многочисленные работы, порой противоречивого характера, тем не менее гистологический метод диагностики черепно-мозговых травм остается основным в практике судебно-медицинских экспертов. Однако выявляемые морфологические изменения при черепно-мозговых травмах в ряде случаев могут не соответствовать времени получения повреждений головного мозга, что может стать причиной ошибочных экспертных заключений, так как характерные гистологические признаки развиваются медленнее. Причинами таких неточностей при определении давности, по всей вероятности, являются физическое состояние, возраст, степень разрушения вещества мозга, объем гематомы, сосудистые патологии и пониженная реактивность организма пострадавшего. Важно отметить, что данное соображение подтверждается накопленным многолетним личным опытом практической работы [10]. При экспертных исследованиях в отдельных случаях кровоизлияний и гематом в головном мозгу после черепно-мозговых травм у ряда умерших лиц были выявлены определенные несоответствия между результатами гистологических исследований и временем наступления смерти.

Ниже, на примере из личной экспертной практики, приведем конкретный случай, когда были выбраны 6 посмертных субъектов экспертизы с внутримозговыми гематомами, у которых было точно зафиксировано время наступления смерти. Из выбранных 6 случаев у 4-х внутримозговые гематомы имели средние размеры. Диаметры гематом находились между 3 - 4,5 см. В двух остальных случаях гематомы носили обширный характер.

При гистологическом исследовании внутримозговых гематом средних размеров в 3-х случаях расхождение между морфологической картиной и временем наступления смерти находилось в интервале от 1 до 7 часов и выражалось отеком, некрозом мозговой ткани с инфильтрацией небольшого количества сегментоядерных лейкоцитов, слабой сосудистой реакцией и осаждением фибрина. Только в одном случае морфологическая картина соответствовала давности времени наступления смерти.

При обширных внутримозговых гематомах в виду того, что продолжительность жизни была короткой, гистологическая картина соответствовала времени наступления смерти.

Считаем также немаловажным поделиться накопленным опытом по определению давности в ранние периоды переломов костей, повреждения внутренних органов, внутрочерепных гематом при черепно-мозговых травмах, которые также являются актуальным в судебно-медицинской практике. В последние годы внимание ряда исследователей привлекает применение селективных методов выявления динамики морфологических изменений фибрина в мягких оболочках и веществе головного мозга при острой черепно-мозговой травме. Так, в процессе изменения свойств молекул фибрина, их можно выявлять и фиксировать с помощью гистохимических методов. В частности, после приготовления гистологического среза, последнее с использованием метода Picro – Mallory в модификации Д.Д. Зербино – “оранжевый – красный – голубой” позволяет выявить фибрины на разных сроках его образования и в зависимости от окрашивания определять “возраст” фибрина. Практика показывает, что данный метод является существенным дополнением к гистологическому методу, так как позволяет определять ранние сроки давности повреждения от 0-6 часов (“молодых” фибринов) и до более 24-48 часов (“старых” фибринов).

Таким образом, при экспертизе телесных повреждений, установление давности внутримозговых повреждений зависит от многих причин, которые создают значительные оценочные затруднения, к которым в первую очередь следует отнести отсутствие современных научно обоснованных единых методологических рекомендаций. По этой причине, имеющиеся научные наработки по связи морфологических изменений с установлением давности внутримозговых повреждений могут быть использованы в судебно – медицинской экспертной практике лишь как ориентировочные. В этой связи, с учетом накопленного опыта, использование сочетанного гистологического и гистохимического методов позволяет значительно повысить достоверность полученных в ходе судебно – медицинских экспертных исследований результатов.

Список литературы

1. Кошак К.В. Динамика морфологических изменений фибрина в мягких оболочках и в веществе головного мозга при острой ЧМТ, Диссертация на соискание ученой степени кандидата медицинских наук автореферат . Новосибирск 2008г
2. Медицинские Диссертации <http://medical-diss.com/medicina/kompleksnye-morfologicheskie-i-fotometricheskie-issledovaniya-pri-sudebno-meditsinskom-ustanovlenii-davnosti-cherepno-mozg#ixzz5qtTpndMq>
3. Источник:<https://medbe.ru/materials/cherepno-mozgovoye-narusheniya/vnutrimozgovoye-gematomy-pri-chmt/>© medbe.ru
4. eurolab-portal ru>enciklopedia /neurologi patient/
5. journal.forens-lit.ru node 562
6. В.Г.Науменко Н.А.Митяева Гистологические и цитологические методы исследования в судебной медицине М.М.1980г стр.118-134
7. Автандилов-Проблемы патогенеза и патологоанатомической диагностики болезней в аспектах морфометрии. Москва Медицина 1984г, стр. 68-73
8. Э.Пиррс Гистохимия, Изд. Иностранной литературы Москва 1962 г. Стр.578-
9. Ю.А.Медведев Таблицы для определения сроков давности инфарктов и кровоизлияния в головном мозге /пособие для врачей/Санкт -Петербург 1997г.
10. Гистологические экспертизы 17-1315,18-0076,18-0095.18-0926 и д8
11. Brueton M.J., Breeze G.R., Stuart J. Fibrin-fibrinogen degradation products in cerebrospinal fluid. // J ClinPathol. 1976 Apr; 29(4):341-4. 590,567-568
12. Определение возраста фибрина по методу Зербина Д.Д. Leksii.org.16-16610 htm

ԳԱՆԳՈՒՂԵՂԱՅԻՆ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԳԱՆԳԱՅԻՆ ՀԵՄԱՏՈՄԱՆԵՐԻ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀՅՈՒՍՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ և ՀԻՍՏՈՔԻՄԻԱԿԱՆ ԱՄՊԵԿՏՆԵՐԸ

Սարգսյան Պ.Գ., Մխիթարյան Կ.Գ.

Գանգուղեղային վնասվածքների աճող հաճախականությունը, բարձր մահացությունը, հաշմանդամությունը ներկայումս հրապապ սոցիալական խնդիր են համարվում, նաև ժամանակակից դարաբժշկական գիտության առանցքային ոլորտներից են: Փորձագիտական պրակտիկայում գանգուղեղային վնասվածքների և ներգանգային հեմատոմաների վաղեմությունը հիմնականում որոշվում է հյուսվածքաբանական հետազոտության մեթոդով: Այնուամենայնիվ,

որոշ դեպքերում սրացված արդյունքները չեն համապատասխանում վնասվածքի վաղեմությանը: Վաղեմության որոշման ժամանակ նման անճշտությունների պատճառներ կարող են համարվել՝ ֆիզիկական վիճակը, տարիքը, ուղեղային նյութի քայքայման աստիճանը, հեմատոմայի ծավալը, անոթային պաթոլոգիաները և տուժածի մարմնի ռեակտիվության նվազումը: Մեր կարծիքով, հյուսվածքաբանական մեթոդին էական լրացում է համարվում ֆիբրինի եռագույն ներկման հասանելի հիստոքիմիական մեթոդը: Մեթոդն արժեքավոր է՝ վաղ ժամանակում վնասվածքի վաղեմության որոշմամբ պայմանավորված:

Բանալի բառեր. գանգուղեղային վնասվածք, ներգանգային հեմատոմա, դատաբժշկական փորձաքննություն, վնասվածքի վաղեմություն, հյուսվածաբանական և հիստոքիմիական մեթոդ:

HISTOLOGICAL AND HISTOCHEMICAL ASPECTS OF THE ASSESSMENT OF DETERMINATION OF THE AGE OF INTRACRANIAL HEMATOMA WITH TRAUMATIC BRAIN INJURY

Sargisyan P., Mkhitaryan K.

The increasing frequency, high mortality and disability of traumatic brain injury is currently an urgent social problem and is considered one of the key areas of modern forensic medical science. In expert practice the prescription of traumatic brain injury and intracranial hematoma is mainly determined by histological research methods. However, in some cases, the results obtained do not correspond to the time of injury. The reasons for such inaccuracies in determining the prescription are the physical well-being, age, the degree of destruction of the brain substance, the volume of the hematoma, vascular pathologies and hyporesponsiveness of victims body. In our view, a significant addition to the histological method is the available histochemical method for tricolor staining of fibrin. The value of the method lies in the fact that the prescription of injury is determined at early date.

Keywords: traumatic brain injury, intracranial hematoma, forensic medical expertise, prescription of injury, histological and histochemical methods

Статья поступила: 06.07.2021

Принята к печати: 06.12.2021

ВОЗМОЖНОСТИ РЕКОНСТРУКЦИИ ФРАГМЕНТИРОВАННЫХ КОСТЕЙ ЧЕРЕПА

Стоян А.О.

*РГКП «Центр судебных экспертиз Министерства юстиции
Республики Казахстан»,
Алматы, Республика Казахстан*

В данной статье рассматривается вопрос реконструкции фрагментированных костей черепа. В качестве исследовательской задачи определена возможность использования термопластичного клея при реконструкции костной ткани. Обобщается практический опыт по исследованию костных останков скелетированных трупов, обнаруженных в период 2016-2021 годы на территории Южного Казахстана. Выделяются и описываются характерные особенности разработанного метода по неинвазивному изучению скелетированного материала плохой сохранности.

Ключевые слова: *фрагментация, деструкция кости, кости черепа, реконструкция костной ткани.*

Высокая давность захоронения костных останков нередко служит причиной их фрагментации [1]. Хрупкая костная ткань может также быть разрушена в ходе ее извлечения из грунта и транспортировки органами полиции [2]. Между тем, в ходе идентификации личности, при определении половой и расовой принадлежности, важная роль отводится вопросам реконструкции фрагментированных костей черепа [3].

В этой связи в медико-криминалистических отделениях судебной экспертизы Республики Казахстан часто возникает необходимость исследования фрагментированных костей черепа. Их реконструкция позволяет установить не только половую и расовую принадлежность, но и прижизненные возраст и рост. В странах ЕС и США постмортальная реконструкция проводится с помощью компьютерных 3D-моделей и 3D-печати [4]. Для этой цели в костях черепа с помощью сверла делаются отверстия, в которые вставляются металлические скобы [5]. Данный метод требует больших затрат времени и является трудоемким, а также может приводить к порче костного препарата. Другим используемым методом является склеивание фрагментов кости цианакрилатным клеем, а также клеем, используемым в стоматологической практике [6]. Оба эти материала являются дорогостоящими.

В рамках практической работы по идентификации личности в медико-криминалистическом отделении «Института судебных экспертиз по городу Алматы» были произведены исследования по реконструкции костной ткани с использованием термопластичного клея [7]. Важно подчеркнуть, что в отечественной судебно-медицинской литературе, а также судебно-медицинской литературе ведущих стран мира отсутствует информация по заявленному выше методическому подходу. Термопластичный клей обладает множеством достоинств – он не только может склеивать различные поверхности, но и способен заполнять пустоты, обладает малой усадкой и

Адрес для корреспонденции: Стоян Анастасия Олеговна, судебно-медицинский эксперт, Институт судебных экспертиз по городу Алматы РГКП «Центр судебных экспертиз Министерства юстиции Республики Казахстан», Тел.: +7(705)105-83-93, эл. почта: lira_88@mail.ru

высокой скоростью полимеризации. Также примечательно то, что данный клей не требует предварительной обработки костной ткани химическими реактивами и отличается низкой стоимостью. Очевидно, что внедрение в постмортальную практику реконструкции костной ткани разработанного метода позволит судебно-медицинским экспертам сократить время проведения исследований костных останков.

Приведенный ниже перечень процедур был вызван тем обстоятельством, что на исследование в «Институт судебных экспертиз по городу Алматы» Республиканского государственного казенного предприятия «Центр судебных экспертиз Министерства юстиции Республики Казахстан» 03 июня 2020 года из следственного отдела управления полиции Талгарского района поступило постановление от 14 мая 2020 года о назначении судебно-медицинской (медико-криминалистической) экспертизы по факту обнаружения костных останков, которые были найдены в ходе проведения строительных работ в поселке Бескайнар Талгарского района. В первую очередь следует отметить, что при проведении реконструкции костной ткани с использованием термопластичного клея в условиях медико-криминалистического отделения «Института судебных экспертиз по городу Алматы» были выполнены следующие процедуры:

- проведено краткое описание случая и вынесено постановление о необходимости проведения судебно-медицинской экспертизы костных останков;
- разработан алгоритм экспертных исследований по проведению идентификации личности.

Следует уточнить, что среди костных останков просматривалось 17 фрагментов черепа. Кости черепа были сопоставимы между собой. Для реконструкции черепа было принято решение воспользоваться вышеупомянутым термопластичным клеем, который приобретает требуемые адгезионные характеристики при нагревании в клеевом пистолете. Благодаря композиционному составу клея содержащему этиленвинилацетат и полиамид последний становится жидким при нагревании и после применения имеет способность быстрого застывания.

В ходе выполненных исследований, с применением положений изложенных в разработанной методике удалось провести реконструкцию черепа по 12 его фрагментам. При этом сопоставить остальные 5 фрагментов не удалось по причине выкрашивания их краев.



Рис. 1 Череп, вид спереди.



Рис. 2 Череп, вид справа.



Рис. 3 Череп, вид слева.




Рис. 4 Череп, вид сверху.




Рис. 5 Череп, вид сзади.




Рис. 6 Череп, вид изнутри.

После реконструкции удалось установить видовую, половую и расовую принадлежность черепа индивидуума, который принадлежал ребенку биологического возраста 3-5 лет, представителю монголоидной расы с наличием отдельных европеоидных признаков.

Таким образом, при постмортальной реконструкции фрагментированных костей черепа рекомендуется придерживаться следующей последовательности выполняемых шагов:

1. Произвести очищение костных останков от наложений грунта.

2. Предпринять попытку сопоставления костных фрагментов до их склеивания по швам или линиям отделения. Вместе с тем, при восстановлении первоначальной формы черепа желательно сначала сопоставить между собой крупные фрагменты черепа, чтобы избежать искажения его первоначальной формы.

3. В случае возможности сопоставления, с помощью клеевого пистолета, нанести клеящий состав на склеиваемые поверхности. Важно иметь в виду, что при постмортальной реконструкции, в соответствии с разработанной методикой, необходима высокая скорость работы по причине быстрого застывания клея.

Следует отметить, что методика имеет ограничения, так как для случаев выкрашивания соединяемых поверхностей, сопоставление не всегда возможно. Однако разработанная методика все же позволяет проводить идентификацию личности даже при исследовании фрагментированных черепов.

Список литературы

1. Пашкова В.И. Очерки судебно-медицинской остеологии. - Москва, «Медгиз», 1963.
2. Герасимов М.М. Восстановление лица по черепу. - М., 1955.
3. Пашкова В.И., Резников Б.Д. Судебно-медицинское отождествление личности по костным останкам. - Саратов, 1978.
4. Белов Н.Н., Югов Н.Т., Ищенко А.Н., Афанасьева С.А., Хабибуллин М.В., Югов А.А., Стуканов А.Л. Математическое моделирование разрушения костной ткани при динамическом нагружении. Журнал «Вестник Томского государственного университета. Математика и механика, 2010.
5. Калмина О.А., Калмин О.В., Сингатулин Р.А. 3D-реконструкция анатомических структур в системах виртуальной реальности. Известия высших учебных заведений. Поволжский регион. Медицинские науки, 2010.
6. Forensic medical forum. - [Электронный ресурс] - www.forens.ru/ Дата обращения 05.08.2020.
7. Термопластичный клей- [Электронный ресурс] - www.ru.m.wikipedia/ Дата обращения 15.09.2020.

ԲԵԿՈՐԱՅԻՆ ԳԱՆԳՈՍԿՐԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ստոյան Ա.Օ.

Հողվածում քննարկվում է բեկորային գանգոսկրերի կառուցվածքային վերականգնման հարցը: Հետազոտական առաջադրանքի շրջանակներում որոշվել է ոսկրային հյուսվածքի կառուցվածքի վերականգնման գործում ջերմապլաստիկ սոսնձի օգտագործման հնարավորությունները: Հողվածում ամփոփվել է 2016-2021 թվականներին Հարավային Ղազախստանի տարածքում հայտնաբերված կմախքացված դիակների ոսկրային մնացորդների ուսումնասիրության գործնական փորձը: Առանձնացվում և նկարագրվում են վատ պահպանված կմախքացված նյութի մշակված ոչ ինվազիվ ուսումնասիրության մեթոդի բնորոշիչ առանձնահատկությունները: **Բանալի բառեր.** բեկորացում, դետիրուկցիա, գանգոսկր, ոսկրային հյուսվածքի կառուցվածքի վերականգնում:

RECONSTRUCTION POSIBILITIES OF DESTROYED BONES OF SCULL

Stoyan A.

High age of the bone burial quite often is a reason of it fragmentation [1]. Fragile bone tissue may be destroyed in the path of extraction from the priming and transportation from police [2]. By the way, bone destruction exactly plays role in the cases of sex and race identification, absence of needed fragments and postmortal deformation [3]. In the article described the problem, and proposed the possibilities of skull bone reconstruction in the cases of fragmentation.

Key words: fragmentation, bone destruction, skull bones, bone reconstruction.

Статья поступила: 28.04.2021

Принята к печати: 06.12.2021

ԿՊՉՈՒՆ ԺԱՊԱՎԵՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՆՈՒՅՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բուդաղյան Մ.Ս., Այվազյան Հ.Գ., Հակոբյան Հ.Պ.

Փորձաքննությունների ազգային բյուրո,
Երևան, Հայաստան

Հողվածում ներկայացվել է դատական հետքաբանական փորձաքննությունների ոլորտում կաշուն ժապավենների օգտագործմամբ քրեագիտական հետազոտման և նույնականացման համար նոր, առավել արդյունավետ կիրառական մեթոդական մոտեցման նկարագրություն: Վերջինիս մշակման և ներդրման անհրաժեշտությունն անկասկած պայմանավորվում է նախաքննական մարմինների կողմից նույնատիպ հանցագործությունների բացահայտմանը նպաստելու առումով փորձագիտական բնագավառի էական նշանակություն ունեցող հավաստի և կարեգործիկ փորձագիտական եզրակացությունների տրամադրմամբ:

Բանալի բառեր. հետաքաբանական փորձաքննություն, մասսայական թողարկման ապրանք, կաշուն ժապավեն, անհատականացնող հատկանիշ, արտադրական պրոցես, միկրոուղեգիծ:

Ինչպես հայտնի է, դատահետքաբանական փորձաքննությունները նշանակվում են նաև տարբեր առարկաների արտադրման և օգտագործման խնդիրների հետ կապված հարցերի պարզման նպատակով: Փորձագիտական հետազոտությունները կարող են իրականացվել տարբեր տեսակի՝ այդ թվում նաև համալիր փորձաքննությունների իրականացման շրջանակներում: Հետքաբանական փորձաքննությունների ոլորտում հատուկ տեղ է գրավում մասսայական թողարկման ապրանքների փորձաքննությունների իրականացումը:

Հետքաբանական հետազոտությունների ժամանակ հետքերի առաջացման մեխանիզմների առանձնահատկությունների հետ կապված գործ ունենք կոնկրետ առարկայի կառուցվածքային մորֆոլոգիական ընդհանուր հատկանիշների և արտադրական պրոցեսների հետ՝ պայմանավորված հետք առաջացնող մեխանիզմների կողմից թողնված հետքերի հայտնաբերման և համակցության մեջ դրանց նույնացման հանգամանքով: Մասսայական թողարկման ապրանքների փորձաքննությունների իրականացման ընթացքում պարզաբանվում են ինչպես դիագնոստիկ (որոնողական), այնպես էլ նույնականացման խնդիրներ [1]: Ընդ որում, այդպիսիք կարող են առնչվել տարբեր տեսակի փորձաքննությունների իրականացման ոլորտների հետ՝ կապված կոնկրետ ապրանքատեսակից և դրան առնչվող պարզաբանման ենթակա խնդիրներից: Այդ առումով՝ մասսայական թողարկման ապրանքների արտադրական տեխնոլոգիաների և մեխանիզմների կողմից թողնված հետքերի ուսումնասիրությունն ու հետազոտությունն իրականացվում է դատահետքաբանական փորձաքննությունների շրջանակներում:

Հետքաբանական փորձաքննությանն առնչվող մասսայական թողարկման առարկաներ են հանդիսանում այն օբյեկտները, որոնք, կապված արտադրական պրոցեսների հետ, ունեն ընդհանուր կառուցվածքային և մասնավոր հատկանիշներ: Այդպիսիք կարող են լինել բազմատիպ և զանազան՝ սկսած հագուստի պարագաներից, վերջացրած տեխնիկական և տնտեսական տարբեր ապրանքներով: Խնդիրն այն է, որ ցանկացած ապրանք կամ առարկա, բացի տեխ-

Թղթակցական հասցեն՝ Մարինե Սարոյի Բուդաղյան, հետքաբանական փորձաքննությունների բաժնի փորձագետ, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ, Հայաստանի Հանրապետություն, Երևան, Ծովակալ Իսակովի 24, ք. Երևան, Իսակովի 24, e-mail: marine.budaghyan@bk.ru

նուրգիական պրոցեսների հետ կապված իրենց վրա կրող հետքերի առկայությունից, կարող են կրել նաև ձեռքբերովի լրացուցիչ հետքեր, որոնք կապված են վերջիններիս շահագործման, օգտագործման հետ: Այն դեպքերում, երբ բացակայում են շահագործման բնույթի հետքերը կամ հետքերն արտահայտված են ոչ պարզ ձևով, փորձագետի կողմից հետազոտությունն իրականացվում է առարկայի այն հետքերի և հատկանիշների հայտնաբերման ուղղությամբ, որոնք առաջանում են արտադրատեխնոլոգիական պրոցեսների ժամանակ և որոնք, տվյալ դեպքում, կարող են լինել ինչպես տեսանելի, այնպես էլ՝ անտեսանելի [2]:

Մասսայական թողարկման ապրանքների առարկայական պատկանելիությունը որոշելու նույնականացման հետքաբանական խնդիրներից են՝ ամբողջի վերականգնումն ըստ մասերի, երբ բացակայում են բաժանված հատվածների ընդհանուր մակերեսները, մի քանի արտադրանքների արտադրության միասնական աղբյուրի պարզաբանումը, կոնկրետ արտադրանքի նույնացումը և այլն [3]:

Սույն հոդվածի շրջանակներում անդրադարձ է կատարվել նույնականացման այն բնագավառին, որը վերաբերում է ամբողջի վերականգնմանն ըստ մասերի, կամ որ նույնն է՝ մասերի առարկայական պատկանելիության որոշումը միևնույն առարկային:

Հետքաբանական հետազոտությունների ժամանակ առավել տարածված մեթոդ է մասնատված մասերի համադրումն ըստ ընդհանուր բաժանարար գծերի (առարկայի կտորված, պատռված եզրեր և այլն): Նման հետազոտությունների ժամանակ՝ այն դեպքերում, երբ բացակայում են կտորված առարկայի այն հատվածները, որոնք ընդհանուր բաժանարար եզրեր չունեն, հետազոտության ընթացքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մասերին արտահայտված այնպիսի առանձնահատուկ հատկանիշներին, որոնք կարող են լրացնել մեկը մյուսին և իրենց համակցության մեջ բնութագրել մասերի առարկայական պատկանելիությունը կոնկրետ առարկային կամ արտադրված ապրանքին: Այդպիսիք կարող են լինել առարկայի՝ ինչպես ընդհանուր չափական կառուցվածքային տվյալները, այնպես էլ այնպիսի հատկանիշներ, որոնք ըստ իրենց տեղակայությունների և կառուցվածքային հատկանիշների կարող են համադրվել առարկայի բացակայող հատվածների կառուցվածքային հատկանիշների հետ [4]: Օրինակ՝ ավտոմեքենաների լուսացրչիների օպտիկական էլեմենտների կառուցվածքների փոխադարձ տեղակայությունները, ձևը, դրվածքը, մակնիշը բնութագրող էլեմենտների մի մասի բացակայությունը և այլն:

Հարկ է նշել, որ մասերով ամբողջի վերականգման հետազոտությունները բավականին դժվար են այն դեպքերում, երբ մասնատված հատվածներն իրենց վրա կրում են բավարար քանակությամբ ընդհանուր և մասնավոր հատկանիշներ, որոնց համակցությունը քանակական և որակական առումով հնարավորություն է տալիս որոշելու մասերի առարկայական պատկանելիությունը կոնկրետ ապրանքին, արտադրանքին:

Չուտ հետքաբանական փորձաքննությունների իրականացման շրջանակներում մասերով ամբողջի վերականգման հետազոտությունները բավականին բարդ և աշխատատար են լինում այն դեպքերում, երբ կոնկրետ առարկայի օգտագործման և շահագործման ժամանակ վերջինից անջատված կամ մասնատված հատվածները՝ կապված առարկայի մորֆոլոգիական առանձնահատկություններից, ենթարկվում են էական ձևափոխությունների. կորցնում են իրենց սկզբնական տեսքը, կառուցվածքային հատկանիշները, և խնդիր է առաջանում՝ առարկայի մասերի սկզբնական տեսքը վերականգնելու, որի համար և հետազոտության ընթացքում կարող են կիրառվել լրացուցիչ փորձագիտական հնարքներ:

Նմանատիպ մասսայական թողարկման ապրանքներից են կաշուն ժապավենները: Շատ հաճախ առանձին հանցագործությունների կատարման ժամանակ (ավազակային հարձակում,

գողություն և այլն) հանցագործները հանցավոր գործողությունների կատարման ընթացքում օգտագործում են կաշուն ժապավեններ, օրինակ՝ զոհին կապկապելու կամ գողնը փաթեթավորելու համար: Նման դեպքերում պոլիմերային կաշուն ժապավեններն իրենց էլաստիկության հաշվին ենթարկվում են ձևափոխությունների և հաճախ ձևափոխությունները հասնում են այն աստիճանի, որ անհնար է դառնում գտնել ընդհանուր բաժանարար գծեր մասնատված կաշուն ժապավենի հատվածների կամ օգտագործված կաշուն ժապավենի և կասկածելի ժապավենի միջև: Սովորական կաշուն ժապավենների հետքաբանական փորձաքննություններ իրականացնելիս կատարված հետազոտությունների ժամանակ պարզվել է, որ որոշ կաշուն ժապավենների վրա՝ կապված արտադրական պրոցեսների հետ, ժապավենի մակերեսին ամբողջ երկայնքով առաջանում են զուգահեռ դասավորության երկայնական դրվածքի միկրոուղեգծեր, որոնք անզեն աչքով տեսանելի չեն: Վերջիններիս հայտնաբերման պարզագույն եղանակը՝ թեք ընկնող լույսի տեսադաշտում, տարբեր անկյան տակ կատարվող մանրադիտակային հետազոտությունն է: Կատարված փորձարարական հետազոտությունների ընթացքում պարզվել է, որ նշված միկրոուղեգծերն ըստ իրենց տեղակայությունների և հաջորդականության ունեն կրկնվող բնույթ՝ կաշուն ժապավենի փաթույթի գրեթե ամբողջ երկայնքով, և այդպիսիք՝ մասնատված հատվածների համադրման մեթոդի կիրառման ժամանակ համընկնում են: Փորձը ցույց է տվել, որ կրկնվող միկրոուղեգծերը համադրվում և համընկնում են փաթույթի գրեթե ամբողջ մակերեսով, նույնիսկ կաշուն ժապավենի փաթույթի սկզբնամասի և վերջնամասի հատվածներում: Նշվածից հետևում է, որ անկախ բաժանարար գծի առկայությունից մանրադիտակային հետազոտությամբ վերը նշված համադրման մեթոդի կիրառմամբ հնարավոր է որոշել օգտագործված կաշուն ժապավենի առարկայական պատկանելիությունը կասկածելի փաթույթին, եթե իհարկե այդպիսիք կոնկրետ գործով ներկայացվել են փորձաքննության:

Ինչպես վերը նշվեց, հետազոտությունը բավականին աշխատատար և դժվար գործընթաց է այն պատճառով, որ օգտագործված ժապավենը ենթարկվում է փոփոխությունների. սոսնձի մակերեսի վրա կարող են կապած լինել բազմաբնույթ միկրոմասնիկներ, նյութեր, որոնք դժվարեցնում են հետազոտության ընթացքը: Նման դեպքերում առաջնահերթ խնդիր է՝ սոսնձաշերտի առանձնացումը կաշուն ժապավենից: Այս առումով ամենադյուրին եղանակը՝ վերջինիս շերտազատումն է ժապավենից տաք ջրի օգնությամբ, որի ընթացքում, բացի սոսնձի շերտազատումից, պոլիմերային մակերեսը (ճմրթված, խճճված) ընդունում է հարթ տեսք, այսինքն՝ ընդունում է իր սկզբնական վիճակը: Վերջինս ապակու վրա տեղադրելով՝ հնարավոր է լինում մանրադիտակային հետազոտությամբ հայտնաբերել վերը նշված միկրոուղեգծերի առկայությունը:

Կաշուն ժապավենի վրա սոսնձաշերտի առկայությունն արտադրական գործընթացի հաջորդական փուլերից է և կապ չունի կաշուն ժապավենի մակերեսի վրա արտադրական պրոցեսով պայմանավորված միկրոուղեգծերի առաջացման հետ, ուստի, բոլոր դեպքերում, նպատակահարմար է սոսնձաշերտի շերտազատման գործընթացը կիրառել ինչպես հետազոտելի ժապավենի հատվածների, այնպես էլ համեմատվող ժապավենի վրա: Տվյալ դեպքում նկարագրված գործընթացը դյուրին է դարձնում միկրոուղեգծերի հայտնաբերումը և դրանց համադրումը: Ինչ վերաբերում է համադրման գործընթացին, ապա ըստ մեթոդական գրականության, իրար հաջորդող թվով վեց ուղեգծերի համընկնումը բավարար է եզրակացնելու, որ հետազոտելի և համեմատվող կաշուն ժապավենները կամ կաշուն ժապավենի մասնատված մասերն ունեն նույն առարկայական պատկանելիությունը, այսինքն՝ միևնույն կաշուն ժապավենի փաթույթից են:


Փորձարարական գործողությունների առումով հարկ է նշել, որ բազմաթիվ փորձաքննությունների իրականացման շրջանակներում փորձարարությունները կատարվել են տարբեր աստի-

ճանի վնասված, ձևափոխված կաչուն ժապավենների հետ, որոնց առարկայական տեսքը վերը նշված եղանակներով վերականգնելու և համեմատական հետազոտություններ իրականացնելու հետ կապված ստացվել են դրական արդյունքներ:

Վերը նշվածն առավել պատկերավոր դարձնելու համար հարկ է ներկայացնել սեփական փորձագիտական պրակտիկայից մեկ օրինակ: Կողպուտի հանցագործության բացահայտման նպատակով փորձաքննության են տրամադրվել ճմրթված, դեֆորմացված, միմյանց կապված կաչուն ժապավեններ և հանցագործության մեջ կասկածվող անձի ավտոմեքենայից առգրավված կաչուն ժապավենի փաթույթ: Փորձաքննությանն առաջադրվել է պարզել՝ արդյո՞ք ներկայացված կաչուն ժապավենները կարող էին պոկված լինել ավտոմեքենայից առգրավված կաչուն ժապավենի փաթույթից: Հետազոտության իրականացման ընթացքում վերը նկարագրված եղանակով ներկայացված կաչուն ժապավենների և փաթույթի որոշ հատվածի սոսնձանյութերը մաքրվել են, այնուհետև իրականացվել է համեմատական հետազոտություն, որի ժամանակ էլ կաչուն ժապավենների մակերեսներին մանրադիտակի տեսադաշտում տեսանելի միկրոուղեգծերի համեմատության և համադրության արդյունքում պարզվել է, որ դրանք ունեն 6 և ավելի համընկնող հատկանիշներ (լուսանկար 1-ում նույնանուն նիշերով նշված են համընկնող միկրոուղեգծերը), ինչն էլ բավարար է եղել նույնացում կատարելու և հանցագործության հանգամանքների պարզման համար էական ապացուցողական նշանակություն ունեցող կատեգորիկ եզրակացություն տալու համար:

Ընդհանրացնելով վերոգրյալն՝ անհրաժեշտ է նշել, որ իրականացված փորձագիտական հետազոտությունների արդյունքում կաչուն ժապավենների հետազոտության և նույնացման ոլորտում մշակված և կիրառվող այս նոր լուծումն արդյունավետ մեթոդական մոտեցում է: Այն կաչուն ժապավենների օգտագործմամբ իրականացված հանցագործությունների բացահայտման գործում արդեն իսկ ունի էական նշանակություն և թույլ է տալիս նույնականացման միջոցով հանգել առավել հավաստի հետևությունների:

Ստորև բերված նկար 1-ում ներկայացված է կաչուն ժապավենի տարբեր հատվածների փորձարարական համադրումների արդյունքների լուսապատկերը, որտեղ նույնանուն նիշերով նշված են համընկնող միկրոուղեգծերը:



Նկար 1. Կաչուն ժապավենի տարբեր հատվածների փորձարարական համադրումների արդյունքները

Գրականության ցանկ

1. Методика трасологического исследования изделий массового производства, Министерство юстиции СССР, Киев, 1983г.
2. Судебная трасология Майлис Н.П., издательство „Экзамен”, Москва 2003г.
3. Трасология и трасологическая экспертиза. Учебник /Кантор И. В. (отв. редактор), Ярмак В. А., Жигалов Н. Ю., Смольяков П. П. (отв. секретарь).— М: ВА ИМЦ ГУК МВД России, 2002.— 376 с.
4. Описание объектов криминалистического исследования, Москва 1995г.

ИССЛЕДОВАНИЕ ЛИПКИХ ЛЕНТ И ОСОБЕННОСТИ ИХ ИДЕНТИФИКАЦИИ

Будагян М.С., Айвазян Г.Г., Акопян А.С.

Статья посвящена детальному анализу нового, более эффективного прикладного методологического подхода с использованием липких лент, при проведении криминалистических идентификационных исследований в области судебно-трасологических экспертиз. Приоритетность разработки и внедрения данного метода, безусловно, обусловлена необходимостью предоставления достоверных и категоричных экспертных заключений органам предварительного следствия, которые позволят повысить раскрываемость аналогичных преступлений.

Ключевые слова: *трасологическая экспертиза, товар массового производства, липкая лента, индивидуальные свойства объекта, производственный процесс, микрослед.*

CHARACTERISTICS OF RESEARCH AND IDENTIFICATION OF ADHESIVE TAPES

Budaghyan M., Ayvazyan H., Hakobyan H.

The article is devoted to a detailed analysis of a new, more effective applied methodological approach using adhesive tapes when conducting forensic identification examination, in the field of forensic traceological expertise. The need to develop and implement this method is undoubtedly due to the need to provide reliable and categorical expert opinions to the preliminary investigation agencies, which will increase the detection rate of similar crimes.

Key words: *traceological expertise, mass-produced goods, adhesive tape, individual properties of an object, production process, microtrace.*

Ներկայացվել է խմբագրության 19.04.2021

Ընդունվել է տպագրության 16.11.2021

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԴԺՔԱԽՏ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բադեյան Ա.Վ. , Մազմանյան Վ.Գ.

*Փորձաքննությունների ազգային բյուրո,
Երևան, Հայաստան*

Հոդվածում ներկայացվել է վերջին 10 տարիների ընթացքում ՀՀ-ում և Արցախում անվտանգության տեխնիկայի կամ աշխատանքի պաշտպանության կանոնների խախտման հետևանքով տեղի ունեցած դժբախտ դեպքերի վերաբերյալ նախաձեռնող մարմինների կողմից «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում նշանակված ճարտարագիտատեխնիկական և դատարտեխնիկական փորձաքննությունների իրականացման նպատակով՝ այդ դեպքերի կայացման անմիջական պատճառների, տեղի ունեցած անվտանգության տեխնիկայի կամ աշխատանքի պաշտպանության կանոնների խախտումների համար պատասխանատու անձանց ինքնության որոշման, բացահայտված խախտումների և տեղի ունեցած դեպքերի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը հիմնավորելու նպատակով կատարված ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքների վերլուծություն:

Ընդ որում, հոդվածում հատկապես շեշտադրություն է կատարվել տեղի ունեցած դժբախտ դեպքերում աշխատանքի անվտանգ պայմանների առկայությունից զար նաև մարդկային գործոնի ազդեցության նշանակության վրա:

Բանալի բառեր. անվտանգության տեխնիկա, աշխատանքի պաշտպանություն, արտադրական դժբախտ պատահարներ, անհատական պաշտպանության միջոցներ, հոգեբանական մթնոլորտ:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով ներկայումս դժբախտ դեպքերի հետևանքով մահացությունը գրավում է երրորդ տեղը՝ սիրտ-անոթային և ուռուցքաբանական հիվանդություններից հետո: Սակայն, եթե այդ հիվանդություններից մահանում են հիմնականում հասուն տարիքի մարդիկ, ապա դժբախտ դեպքերից զոհվում են առավելապես երիտասարդ և միջին տարիքի աշխատունակ մարդիկ:

Այսպես, վիճակագրությունը ցույց է տալիս, որ 18-ից մինչև 36 տարեկան տղամարդկանց մոտ մահածության տարածվածության ամենամեծ պատճառը հանդիսանում են դժբախտ պատահարները [1]: Կարելի է վստահ պնդել, որ մեր երկրում, ինչպես նաև ամբողջ աշխարհում, շինարարական և այլ տեսակի աշխատանքների իրականացման ընթացքում անվտանգության տեխնիկայի կանոնների խախտումների հետևանքով տեղի ունեցած դժբախտ դեպքերի արդյունքում մահվան և ստացված մարմնական վնասվածքների նվազեցման խնդիրը արտակարգ հրատապ է և արժանի է մեծ ուշադրության [2]:

Աշխատանքի պաշտպանության հիմնական մեթոդն արդեն երկար տարիներ հանդիսանում է անվտանգության տեխնիկական միջոցների օգտագործումը, որով լուծվում է երկու հիմնական խնդիր.

1. Մեքենաների, գործիքների, տեխնոլոգիաների ստեղծումը, որոնց օգտագործման դեպքում

Թղթակցական հասցեն՝ Աշոտ Վարդգեսի Բադեյան, ճարտարագիտատեխնիկական փորձաքննությունների բաժնի պետ, ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ, Հայաստանի Հանրապետություն, Երևան, Ծովակալ Իսակովի 24, e-mail: a.badeyan@nbe.am

անհատական պատահարների առաջացման վտանգն իջեցվում է մինչև նվազագույնի:

2. Հատուկ պաշտպանության միջոցների ստեղծումը, որոնք աշխատանքի ընթացքում պաշտպանում են մարդուն պատահարների առաջացման վտանգներից:

Սակայն, վերլուծելով «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում (հետագայում՝ Կազմակերպություն) նախաձեռնող մարմնի կողմից անվտանգության տեխնիկայի դատատեխնիկական փորձաքննությունների նշանակման և դրանք Կազմակերպության ճարտարագիտատեխնիկական փորձաքննությունների բաժնում կատարման վիճակագրությունը, կարելի է եզրակացնել, որ դժբախտ պատահարներից առնվազն երկու երրորդ մասում գլխավոր մեղավորը համարվում է ոչ թե տեխնիկական և տեխնոլոգիական պրոցեսներն, այլ աշխատող մարդն՝ ինքը, որն այս կամ այն պատճառով չի պահպանում անվտանգության կանոնները, խաթարում է աշխատանքային պրոցեսի նորմալ ընթացքը, չի կիրառում նախատեսված անհատական պաշտպանության միջոցները և այլն: Պարզ է, որ եթե մարդը գտնվում է հոգեպես նորմալ վիճակում, ապա նա առանց պատճառի չի ձգտի վնասվածքներ ստանալուն:

Դժբախտ դեպքերը պատահում են կամ մարդուց անկախ պատճառներով, կամ այն դեպքում, երբ նրան դրդում են որոշակի իրավիճակում թույլ տալ անվտանգության կանոնների խախտում: Պարզ է, որպեսզի կանխվի նման պատահարների առաջացումը, պետք է ամենից առաջ ի հայտ բերել այդ «խթանիչները» և հնարավորության սահմաններում փոքրացնել նրանց ազդեցությունը:

Տեխնոլոգիական առաջընթացի ամենաընդհանուր օրինաչափությունների դիտարկումը, ինչպես նաև Կազմակերպությունում կատարված անվտանգության տեխնիկայի կամ աշխատանքի պաշտպանության կանոնների խախտումների վերաբերյալ նշանակված փորձաքննությունների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ իրավիճակները, որոնք հանգեցնում են դժբախտ դեպքերի և վթարների, միանգամայն առաջանում են հետևյալ օբյեկտիվ պատճառներից.

Առաջին պատճառն այն է, որ աշխատանքի միջոցների զարգացման հետ զուգահեռ ընդարձակվում է մարդու ինչպես բազմազան, այնպես էլ ինտենսիվ ազդեցության տիրույթը շրջակա միջավայրի վրա: Գիտության նվաճումները թույլ են տալիս տեխնիկայի շահագործման ժամանակ այն ավելի քիչ վտանգավոր դարձնել, ստեղծել վտանգներից պաշտպանվելու համապատասխան միջոցներ, և վտանգավորությունը հաշվի առնելով՝ ընտրել գործողությունների եղանակները և այլն: Սակայն, չնայած այդ նախազգուշացնող միջոցներին, տեխնիկայի զարգացմանը զուգահեռ վտանգավորությունն աճում է ավելի արագ, քան նրան դիմակայունությունը:

Երկրորդ պատճառը դա մարդու կյանքի և աշխատանքի պայմանների ավելի դաժան և վտանգավոր դառնալն է. այն սխալի գնի աճն է: Այժմ մարդիկ ավելի շատ մահանում են բարձր լարվածության հոսանքից, ավելի շատ մեծ հզորության բեռնամբարձ և տրանսպորտային միջոցների օգտագործումից, վայր են ընկնում բարձրությունից, և հաճախ ոչ թե գետնին, այլ ասֆալտին կամ բետոնին:

Երրորդ պատճառը դա մարդու ընտելանալն է վտանգներին: Ընտելանալով տեխնիկային և օգտվելով նրանից ստացված օգուտին, մարդը հաճախ մոռանում է, որ տեխնիկական սովորաբար հանդիսանում է նաև բարձր վտանգի աղբյուր և տեխնիկայի ինտենսիվ օգտագործումը բարձրացնում է վտանգավոր պատահարների իրականացման հավանականությունը: Վտանգավոր սարքավորումների հետ մշտական շփումը (դրանց շահագործումը), դժբախտ դեպքերի մասսայականության վերաբերյալ անտեղյակությունը հանգեցնում է նրան, որ մարդը դադարում է վախենալ այն բանից, ինչն իրականում հանդիսանում է շատ վտանգավոր: Բարեբախտաբար, ոչ բոլոր խախտումներն են հանգեցնում դժբախտ դեպքերի առաջացմանը: Սակայն այդ

«բարեբախտաբար»-ը ունի նաև հակադարձ կողմ: Մարդիկ մի անգամ անպատիժ խախտելով անվտանգության կանոնները և դրանից ստանալով ինչ որ փոքր օգուտ՝ կրկնում են նման խախտումները: Աստիճանաբար հարմարվում են վտանգներին և դրա հետ մեկտեղ ձեռք են բերում կանոնների խախտման սովորույթ:

Կազմակերպությունում աշխատանքի անվտանգության կանոնների խախտումների հետևանքով տեղի ունեցած դժբախտ դեպքերի վերաբերյալ նշանակված փորձաքննությունների իրականացման ժամանակ տրամադրված քրեական գործերի նյութերի ուսումնասիրության և կատարված հետազոտությունների արդյունքներով կարելի է եզրակացնել նաև, որ ընդհանուր պատճառներին զուգահեռ բացահայտվում է շատ տարաբնույթ, հաճախ անհատական գործոններ՝ հիմնականում հոգեբանական կարգի, որով ստեղծվում են աշխատանքի անվտանգության կանոնների կանխամտածված խախտումներ և դժբախտ դեպքերի քանակի աճ (համարձակության ցուցադրում, անկարգապահություն, ռիսկի նկատմամբ հակում և այլն):

Հետևաբար, միայն տեխնիկական ճանապարհով անվտանգության խնդիրը չի լուծվի: Ավելին, տեխնիկայի կատարելագործման, դրան հուսալիության և անվտանգության բարձրացմանը զուգահեռ՝ մարդկային գործոնի ազդեցությունը դառնում է ավելի կարևոր: Դժբախտ դեպքերի կայացման պատճառների վերլուծությունը ցույց է տալիս, որ դեպքերի ընդհանուր քանակի մեջ մարդու կողմից թույլ տրված սխալն ավելի մեծ դեր է խաղում, ինչն էլ հանդիսանում է դեպքերի կայացման անմիջական պատճառը:

Ինչու՞մ է կայանում մարդու ոչ ճիշտ, սխալ գործողությունների պատճառը: Պատճառները բազմազան են. դրանք կարող են լինել և զուտ սուբյեկտիվ գործոններ, ինչպիսին է, օրինակ՝ մարդու մոտ տվյալ աշխատանքի կատարման համար անհրաժեշտ հոգեբանական որակի կամ ֆիզիոլոգիական կարգի բացակայությունը, գիտելիքների և փորձի պակասությունը, ֆիզիոլոգիական կարգի կամ հուզական իրավիճակի խախտումները և այլն:

Ներքին գործոնները կարող են առաջ գալ նաև արտաքին իրադարձությունների ազդեցությունից, ինչպես, օրինակ՝ արտաքին ֆիզիկական ազդեցությունը՝ սկսած նրանից, որ առաջանում է աշխատանքի պայմաններից և ընդհուպ այնպիսի երևույթներն, ինչպիսիք են մագնիսական փոթորիկները, լուսնի փուլերի փոփոխությունը, որոնք կարող են թերևս ազդել մարդու ներքին հուզական վիճակի (սյարդային, սրտանոթային համակարգի) վրա և լինել դժբախտ դեպքերի առաջացման անմիջական պատճառը:

Դժբախտ դեպքերի առաջացման վրա ազդում են նաև շատ սոցիալական գործոններ, ինչպիսին է աշխատանքային կոլեկտիվում առկա հոգեբանական մթնոլորտը, աշխատանքի խթանման կարգի ընտրությունը, ապրելակերպը և այլն:

Այսպիսով, պարզվում է, որ մարդու կողմից թույլ տրված սխալների, բաց թողումների, կանխամտածված և պատահական կատարված վտանգավոր գործողությունների պատճառների բացահայտելը նախազգուշացնելը, համարվում է բարձր անորոշության և բարդության խնդիր:

Աշխատանքի անվտանգության հոգեբանությունը, որպես գիտական ուղղություն՝ կոչված է գտնել և աշխատողներին առաջարկել վերը նշված խնդիրների լուծման կոնկրետ երաշխիքներ: Վերջին հաշվով, աշխատանքի անվտանգության ապահովման միջոցառումների համակարգում մարդկային գործոնը պետք է դառնա հուսալի օղակ:

Ինչպես ցույց է տալիս վերջին 10 տարիների ընթացքում ՀՀ-ում, ինչպես նաև Արցախում անվտանգության տեխնիկայի կամ աշխատանքի պաշտպանության կանոնների խախտումների հետևանքով տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ նշանակված ճարտարագիտատեխնիկական փորձաքննությունների կատարման նպատակով տրամադրված նախապատրաստական նյութերում կամ հարուցված քրեական գործերում առկա ելակետային տվյալների հետազոտությու-

նր՝ ցանկացած վտանգավոր գործողություն, որի արդյունքում տեղի է ունեցել դժբախտ դեպք, կարող է լինել մեկ կամ մի շարք պատճառների հետևանք:

Բերենք մի պայմանական օրինակ. ընկերության աշխակիցները չլինելով գրանցված աշխատակիցներ, խախտելով Աշխատանքային օրենսգրքի պահանջները՝ կատարում են անօրինական աշխատանք: Այսինքն, աշխատում են առանց աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված աշխատանքային պայմանագրերի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերի առկայության, որի հետևանքով չեն ստանում անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ պատշաճ հրահանգավորում, ինչպես նաև աշխատում են առանց անհատական պաշտպանության միջոցների կիրառության [3]:

Դժբախտ դեպքերի պատճառ կարող է համարվել նաև սպասարկվող սարքավորման վիճակի ոչ ճիշտ գնահատումը, ինչը կարող է լինել մասնագիտական գիտելիքների պակասի արդյունք, աշխատանքի անվտանգության վերաբերյալ ուսուցման բացակայություն, աշխատողի վատառողջ լինելը, սարքավորման վիճակի ճիշտ գնահատման համար անհրաժեշտ ժամանակի սղությունը, ինչպես նաև աշխատողի կողմից սարքավորման վիճակի ստուգումն ուղղակիորեն անտեսելը:

